

14732

Ա. Լ. Ա. Զ. Ա. Ն.

ՀԱՅԱՍՏԱՆԻ

891. 99

Ա. 28

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

1 9 2 7

891.99

Կ-28

DEC 1 2010
26 MAY 2005

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Ա.ԼԱԶԱՆ

ԴԱՍԱԼԻԺԸ

(533)

ԷԶ

83

Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏՍԿԱՆԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԻԹՅՈՒՆ

ՅԵՆԺԱՆ 1927

Ա. ՄՇԱԿԻՅԱՆ

Անի



10001. 2013
2005 YAM 8 S

14732

Գրատեպլար № 236բ.

Հ. 570

Տերաժ 3,000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում 635

1.
ԿԻՍԱՔԱՂ արտի ծայրին, նստել և
ցորնի դեղը:

Շուրջը՝ փխրուն սև հող և:

Հողի չերեսին, սանդերքի ատամների
պես ցցվել են նոր քաղած ցորնի դեղին ցո-
ղունները:

Միապաղաղ անապատում մեկ-մեկ չերեացող
ոսպիանների լայնատերև արմավենիների նման,
արտի դեղին տարածության մեջ նշմարվում են
չերինջնակի փշոտ թփերը, վորոնք դիտավորյալ
կերպով դուրս են թողնված մանգաղի բերանից:

Փխրուն հողի չերեսին, ցողունների մեջ, կամ
հողում թաղված քարերի վրայով, աշխույժ խը-
լրում են հողագույն մողեսները և փոքրիկ իսկ
խշտից՝ տասնյակ տեղերից թռչկոտել են ըս-
կսում կանաչավուն կիտունները:

Յերբ արևը քիչ թեքվել և սկսում դեպի դի-

276154

մացի ցորնագուռն սարը և դեղի կողքին սավերի մի շերտ փռում, քաղվոր Արտոն գետին և գը-
ցում մանգաղը, հնամաշ արխալուղի փեշերով
սրբում ճակատի քրտինքը և ինքն իրեն կամաց
խոսելով, դեղի մոտ և գալիս, հանգստանալու:

Գլխին՝ կարկատած մոխրագուռն կեպի յե,
վորի առջևի մասում, նա լրագրի մի կտոր և
ամրացրել արևի շեշտակի ու կիզիչ ճառագայթ-
ներից դեմքը պաշտպանելու համար:

Յերկու կողմերից, լավաշների նման, կեպու
վրա բացվել են նրա նոսր ու մեծ աղանջները:

Քիթն ուղղաձիգ կերպով իջել և մինչև վերի
շրթունքը, քիչ կլորվել ու կանգ առնել, թողնե-
լով յերկու լայն ու բավականին կեղտոտ անցքեր:

Քիթից ներքև, վերի շրթունքների վրա, պըս-
պղում են վոսկեգուշն աղվամազերը: Նման աղ-
վամազերի չիլկու փունջ ել նրա ծնոտի յերկու
կողմերում:

Արխալուղի քանդած կոճակների տակից յե-
րևում և նրա քրտնած ու վոսպնագուշն կուրծքը:

Արտոն մենակ և քաղում իրենց արար:

Նրա հաբն արդեն բանից ընկել և: Ինքն ել
վոր վաթսուե տարեկան դառնա ու այդ վաթսու-
նից՝ հիսունը չարաչար աշխատանքի մեջ մխտի,
նրա որին կընկնի:

Մայրն ել՝ յերերվելով հազիվ հաց ու թան
բերի քաղվոր վորդուն:

Իսկ տանն ել, դրանցից զատ ուրիշ վոչ վոք
չկա:

Նստում և Արտոն դեզատակի շվաքում ու
ինքն իրան միտք անում:

— «Ես ել կյանք ա, ես ել ապրո՞ւստ ա: Ա-
ռավոտից ընչանք իրիկուն արունք քրտինք թա-
փի, արևի տակ տապակվի ու մի քասա թանով
փոր կշտացրա: Յանի ես դիմն ու՞մ համար ըն-
չի՞ համար, ինչս ա մնացել ես շոգ ու անշուր
չոլում: Ես ել հալբաթ կոմսոմոլի կյանք ա ելի՞:
Թե՛քած ըսենց կոմսոմոլի կյանքին: Թե՛ պտի հլի
ըսենց չարչարվելի, յանի ել խի կոմսոմոլ գրվե-
ցի: Ձե՛, իմս քաղաքն ա, ինչքան ուղում են
ղըղըռան եդ պառավն ու հալիվորը... Քաղաքի
ու ըստեղի կյանքն ել հալբաթ մեկ են... Գնա
քեզ հմար մի քանի սհաթ ծառայի ու ընդունց
դենը դուս արի բուլվար, պրաժեկտոր ու քեֆդ
արամիշ արա...»:

Դեզատակին նա յերկար եր մտածում ու խո-
սում ինքն իրեն, ապա մտքի թևերով քաղաք
փոխադրվում: Հազար տեսակ պաշտոնի մտնում:
«Ես մեկը լավ չի, փողը քիչ են տալիս... Են
մինը վոնց վոր ավելի լավն ա... Են մեկելը դհա

լամն ա... Ես ինչ լավ կյանք ա, ես ինչ լավ ապրուստ»։ Ռոճիկը՝ շատ, սենյակը՝ լավ, «քաղըրվարի»։ Մագերը կտրած կոմպերիտունիները հետ «ծանոթվում»։ Ամեն ոք՝ թատրոն, կինո։ Ինքն ել իրանց գյուղի վարժապետիցն ավելի «բան ֆանսող» ու «գիտուն»... — «Ուխտ, կյանքն ել զաթի ես ա», — մտածում եր Արտոն ու նորից սթափվում դեզի շվաքում։

Յերկար եր միտք անում Արտոն ախպես, ու յերբ «յերանելի» մտքերի շարանը կտրվում, կամ վերջանում եր, վոնց վոր յերազում, մի սև ոձ դարձած, նրան եր մոտենում ու կարծես ձեռներն եր ուզում փաթաթվել մանգաղը։

Ելի յեր մտածում նա, ապա պապական կոկորդը թրջում դեգատակին թեք ընկած կժի տաք ջրով, վեր կենում տեղից և դանդաղ, դագաղի յետևից գնացող հողարկավորի պես, գլխիկոր ու մտադբաղ, որորվում դեպի արտն ու մանգաղը։

* *

Նման որերից մեկն եր։

Միալար սվոցով բանում եր կեռ մանգաղը։ Հասկերն որորում եյին վոսկեզուլն, կոր գլխիկները և գետին փովում ամբողջ հասակով։

Քաղում ե Արտոն, սակայն ինքն ել չի իմանում արտունի ե թե՞ քաղաքում...։

Հասկերի վոսկի գլխիկների միջից — քաղաքն ե փովել նրա դեմ իր ուղիղ փողոցներով և սև, քարաշեն տներովը։

... Քաղաքը... տները... պրաժեկտոր... թատրոն... պաշտոններ... ու... մագերը կտրած կոմպերիտունիներ...։

Քաղում ե Արտոն, «յերանավետ» մտքերին հանձնված։

Աչքերով՝ անմիջականորեն արտն ու մանգաղն ե տեսնում, բայց մտքի աչքերով՝ սլանում հեռուններն ու հեռունները...։

Բայց մանգաղը դավաճանեց նրան։ Յորնի փնջի հետ նա քերեց Արտոյի ձեռքը, կարմիր ու տաք հեղուկով ներկելով դեզին ցողուններն ու գորշ հողը։

* *

— Յես ել հանդ գնացողը չեմ. բոլ ա, հոգիս կերաք, ես ել ապրուստ ա, ես ել կյանք ա, թքած ըսենց կյանքին։ Յես ձեզ ասում եմ թող արեք քաղաք գնամ, փող աշխատեմ, դարկեմ ձեզ ու դուք թեք ընկեք, աղավարի կերեք. համա դուք մի կողի ընկած, մի բաշ ձեր եջն եք

բշում: Ձեռս ել վրեն տվի, բոլա, ել ինչ եք ուզում: Հո չեք ուզում վոր ջանդտկա ել արտում շուն ու կիլի փայ դառնա...:

— Այ բալա, փորձանք ա, պատահում ա, ցավն ու փորձանքը մարդկանց հմար ա ստեղծած, հո սար ու չոլի հմար չի—հաստ ձախով վրա բերեց Արո ապին, թագբեհի հատիկները չխչխկացնելով:

Ապու մեծ մոթալը մինչև ականջներն է իջել:

Թավ հոնքերը՝ հավի բացված թևերի յեն նմանվում, վորոնց ներքևում, ցանցառ արտավանուկները տակից, խաղողի ճխլված հատիկների նման, յերևում են նրա ջրակալած բիբերը:

Յերբ ապին դողդոջ ձեռներով բռնած խմում է թանը, բեխերը փռվում ու ծփում են նրա յերեսին, վոնց մամուռը՝ ջրի յերեսին: Թանի քասան յետ տանելուց հետո, նա բերանն եքաշում թաց բեխերը և ախորժակով ձծում:

— Յա, բալա, հաց աշխատելը, քյուլֆաթ պահելը գիտաս թե հեշտ բան ա... Բա յես ինչ չարչարանքով եմ քեզ եդ յաշին հասցրել: Յերեսուն տարի մենակ Գարսևան աղի կշտին եմ նոքարություն արել, գոմշի հետ հաշան եմ կրել, յեզան հետ կամ եմ քաշել ու ես մեջքով ամեն առավոտ թամբդել, դուրսն եմ թափել քսան

տավարի աղբը: Սավալի եդ, քանն հետ պլետ ու դագանակ եմ կերել աղիցս: Բա բալա ջան, ոջախ դնել, հաց վաստրկել, քուլֆաթ պահելը հեշտ չի... Ընչանք հմի վոնչ ֆող եմ ունեցել, վոնչ մալ: Հմի յեկ վառք Ասսու, Սավետի գահոնը հաստատ մնա, ֆող ել տվեց, արա ել, ել ինչ ես դարդ անում, բալա ջան, վար ու ցանքս արա ու քեզ հմար արխային ապրի, ելի...:

— Ե... ելի հին նաղներն սկսեցի: Իմացանք: Հմի ինչ անենք վոր դու ըտենց ես ապրել, ըու ասելով պտի յես ել ըտենց ապրեմ, ինչ ա: Են քու վախտը դնաց և իրա զակոնն ել հետը տարավ, հմի ալամը փոխվել ա, փոխվել...

— Բան չունեմ, բալա ջան, իմ ասիլս ել են ա, վոր յես ես ոջախը դրել եմ, լավ թե փիս, շեն եմ պահել, դու յեկ գլուխ տար, կրակը վառ պահիր ոջախումս: Ես աշնանն ել զաթի, Տերը կամենա, մի հորվորդի, հալալ կաթնակեր աղջիկ կը ճարենք, վոր դա մորդ բոմագ ըլի: Ինչ անեմ, բալա ջան, իմս պրծել ա, ել ձեռս բան չի բռնում, մի բանի տարի յեկ պահիր ու պատվով ֆողը դիր հորդ գլուխը:

— Ապի, դու ելի, հա քու ասածն ես զոռում, ինչ անեմ դատարկ ոջախդ, ինձ ուսում ա պետք, ուսում...:

— Ըստի յեւ են կարդացնըմ, վորդի, իրիկ-
նեցը պճիճն երը հվաքում, կարդըմ են, դու
յեւ գնա կարդա, քեզ ով ա բան ասել—վրա բե-
րեց Արտոյի մայրը, վոր գլուխը քարշ, մեծ ա-
սեղով տղի ծակ գուլպաներն եր կարկատում:

— Եհ, նանի, դու յեւ յանի բան ասիր ելի,
նրանց կարդացնիլն ինձ փոր չի կշտացնում.
Յես պտի քաղաք գնամ և մեր վարժապետիցն
եւ «գիտուն» դառնամ...:

Նազթի ճրագը, կուչ յեկած սև ճրագկալի
վրա, լուռ հեկեկում եր:

Այդ հեկեկոցի տակ, դեռ յերկար զրուցում
եյին նրանք: Հայրն՝ իր ոջախի հեռանկարնե-
րով, իսկ վորդին՝ քաղաքի:

2.

Ամառային պարզկա գիշեր եր:

Ամեն ինչ լռել եր գյուղում:

Հակառակ ցերեկվա այրող շոգին, գիշերը
հով եր և ճանապարհորդության համար հաճելի:

Յիրկու լավաշ ու մի կտոր պանիր փաթա-
թելով հին թաշկինակի մեջ, մեջքին կապեց Ար-
տոն, վերցրեց ձեռնափայտը և դուրս յեկավ տա-
նից, յերբ ապին ու իր պառավը խռովացնում
եյին և կամացուկ շրջնաց—

— Մնաք բարով. ձեր ոջախը ձեզ ընի,
յես չուզեցի ձեր ոջախը...:

Գյուղի նեղ փողոցներով նա անցնում եր
դողի նման կասկածամիտ: Նրան թվում եր, վոր
ամեն մի խոտադեզը, կամ աթարի ամրոցը մի-
մի փափախներ են, վորոնց տակ պահ մտած
գլուխներն՝ աչքերը չռած, ականջները լարած,
հետևում են իր ամեն մի քայլին: Ահա են մեկը
վոնց վոր ապու փափախը լինի:—«Զնի ապին

զալիս ա...» մտածեց Արտոն ու առանց մար-
մինը շարժելու, գլուխը դեպի յետ ծռեց:

Նա գնում եր կամացուկ, կծկված ու վտա-
ները դետնին ելին կաշոււմ առանց փոքրիկ իսկ
ձայն հանելու:

Այսպես, մինչև գլուղից դուրս յեկավ: Իսկ
յերբ բավական հեռացավ, սիրտն աստղալից յեր-
կընքի նման բացվեց ու «յերջանկավետ» մըտ-
քերը նորից կյանք առան:

Դիմացի բլուրներն ու պուրակները, վոնց վոր
բաղաքի թաղերը լինեն, բարաշեն, թիթեղա-
ծածկ ու ներկված տներով:

Ահա, են ավելի բարձրը, վոնց վոր իրապաշ-
տոնատեղին լինի, իսկ են մեկեւն ել՝ «պրաժեկ-
տորի շենքն ա զաթի»:

Լուսինն ել՝ մաղերը կտրած կոմյերիտուհի
լինի ասես, վորը ծովել ու քաղցրորեն ժպտում
է Արտոյին:

— «Լաղաթ... կյանքը ես ա, ես... համա
վոնց ազատվեցի...»

* * *

Արո ապու քուլաշը հանդոււմ մնաց ու հողն
եւ անտեր:

Ո՞վ պիտի հրա հոգսը քաշեր, ո՞վ պիտի
մտածեր նրանց ապրուստի մասին:

Յերկար միտք արին մարդն ու կնիկը, ապին
յերկար սրորեց ծեր գլուխը, նա յերկար և հա-
մառորեն թաղբեհի հատիկների մեջ վորոնեց իր
բաղդը, բայց ճար չեղավ:

— Ելի հուլիս Գարսեան աղի վրին ա, այ
կնիկ, ասըմ եմ, գնամ նրա վոտն ընկնեմ, բալի
մի իլլաջ անի. եսքան տարի նրա աղն ու հացն
եմ կերել, նա եղ աղն ու հացը հարամ չի անի:

Կնիկն ինչ կարող է ասել: Դրոնից լավ միջոց
դժվար թե նա յել մտածեր:

Հաստ ու վոստոտ ձեռնափայտին հենած ա-
պին բոնեց Գարսեան աղի տան ճանապարհը:

— Բարաշողում, Գարսեան աղա,— կամացուկ
ու վախկոտ տոնով կմկմաց Արո ապին, և յեկեղե-
ցու պատի տակին վոդորմութուն խնդրողի նը-
ման, կուչ յեկավ դռան յետև:

— Աստծու բարին, հ՞ը, խեբ ըլի, ինչ կա, —
մոմուաց Գարսեան աղեն խանչալներին նման կեռ
բեխերի տակից, և հարցական հայացքը դեպի նա
վոլորելով:

— Խեբր՝ խեբ ա, Գարսեան աղա, խեբ չե-
լած, դհա ինչ կարող ա ըլել:

— Հ՞ը, ասա, բանն ընչո՞ւմն ա...

— Աղա ջան, ելի քո նոքարն եմ, քո վոտի
տակի ֆողն եմ... Քուլաշս հանդոււմն ա մնացել,

բեջարող չկա: Տղես փախել ա, ասըմ են քա-
ղաք ա գնացել: Հմի մաթալ եմ մնացել: հուլաս
մենակ քո վրեն ա, բալի մի իլլաջ անես:

— Բա՛... փուշ ժառանգն ել ըսենց կլինի,
բերնին մի արշին լիզու ունի, վոր խոսացնես
ել—«կուլակ ես» կասի, հերն ել հո կուլակ
չէր, խի եդ որին գցեց: Ե՛հ... ախլարքը քանդ-
վել ա, ել վոնչ մենծն են ճնաչում, վոնչ պու-
ճուրը... Աստվածն ա, վոր համբերում ա, յես
ըլեցի, չեցի համբերի... Նստի, նստի, Արո ա-
պեր, նստի, հալբաթ մի ճար կանենք—վրա բե-
րեց Գարսևան աղեն միբուր շոյելով:

Թշվառությունն ու անզորությունն եր մարմ-
նացել Արո ապու աչքերում: Որորելով ծեր
գլուխը, նա անխոս կուշ յեկավ թախտի մի
ծայրին:

— Հախն ել ինչ ա կստանաս, Գարսևան ա-
ղա—լուությունը խզեց ապին:

— Հախս վո՛րն ա, մի լավություն ա, կա-
նենք ելի՛, յես քո ամազը չեմ մոռացել: Դու
յես, վոր հեչ չես հիշում, հեչ տունս ել չես գա-
լիս, լայեդ ել չես անում հետս խոսաս: Ըտենց ա,
բա՛. հմի մենծ մարդ ես դառել, ժողովներ ես
գնում, ո՞վ ա իմանում ընդիարենք ընչեր ես խո-
սում իմ մասին: Գյուղխորհուրդ ընտրելիս ել

արածս լավությունները մտքիցդ ընկնում են և
ինձ թողած, գող ու անամոթ բատրակներին ես
մատ տնկում: Վհնց ա, խի՛ չես քո ընտրած
բատրակների կշտին գնում, թող ոգնեն ե՛...
բա՛, ըսենց բաներ կան Արո ապեր:

— Դրուստ ես ասում, աղա՛ ջան. ըստուց
դենն ել զալաթ եմ արել: Համա դու մեր գոր-
ծիցը խոսա, մի իլլաջ արա արևիդ դուրբան:

— Արո ապեր, հմի հո զիտաս ինչ վախտ ա,
կալի լավ ժամանակն ա, հմի հերն բսկի իր տը-
ղին տավար չի տալիս, համա յես՝ հոժարու-
թյամբ իմ վրեն եմ վե կախում քուլաշդ կրեն
ու ծեծելը... Համա, պայմանով վոր մասուը
կիսենք:

Մտածեց Արո ապին, յերկար մտածեց, մըտ-
քում հաշվեց, չափեց, ձևեց ու դժկամությամբ
վրա բերեց —

— Թող քո խոսքն ըլնի, Գարսևան աղա...

— Եդ ել վոր անում եմ, քեզ հմար ա, յես
քու դուլլուղը չեմ մոռացել, թե ուրիշն ըլներ,
իրեք փաջն ել վոր տար, ուզի չե՛ի լինի—հա-
մոզիչ տոնով ծոր տվեց Գարսևան աղեն:

— Ապրեն վորդիքդ, աղա՛ ջան...

— Բա՛, յես ել խո քո «կոմլոսոլ» տղի պես
անջիգյար չեմ: Խեղճ մարդ...

— Ե՛հ հ...

— Ապեր, ապրձ եմ արի մի ուրիշ բազար ել անենք. յես գիտամ, դու ել արող բեջարողը չես, վոչ մալ ունես, վոչ ել աշխատող ձեռք. տղեդ ել զաթի քաղաքից յետ եկողը չի, փուշ ըլնի ըտենց բեդովաթ ժառանգը հա... Ասըմ եմ, արի, հողդ ել ինձ տուր իջարով ու դու հեռու կաղնի քեզ հմար, յես վարեմ, ցանեմ ու մասուլն ուղարկեմ սուենդ, մի բան, վոր հմի հողս քիչ ա և մալ-տավար ել ունեմ փառք Աստծու...:

— Եդ ել լավ ես ասում, աղան ջան, համա... պայմանն ինչ ա...

— Դու գիտաս, վոր յես քեզ ուրիշի վոտի չեմ տանի, յես քու ամագդ չեմ մոռացել, քեզանից մի բան ել պակաս կը վեկալնեմ: Խալխը, ինքն երկուսն ա վե կալնում, մեկը, տիրոջ տալիս, համա յես խղճով բան կը բռնեմ, կեսը ինձ, կեսը՝ քեզ: Սերմը կառնենք կիսովի, հողը քեզանից, մալն ու աշխատանքն ել՝ ինձանից:

— Դըժար ա, աղան ջան, դըժար, — կամաց ձայնով վրա բերեց Արո ապին, հաստ բեխերի տակից:

— Դու գիտաս, յես հլա քեզ պակաս ասի,

կարող ա ինքդ ես ուզում բեջարել հողդ, գնա, բեջարի, յես ավելի ուրախ կը լինեմ, — խոսակցուլթյանը մտերմական շեշտ տալով, շարունակեց Գարսևան աղեն:

Նա գիտեր, թե հըր եր ուղղում իր սլաքները: Մի ձեռքը քուլնքին՝ յերկար միտք արեց Արո ապին և իր մահավճիռն ստորագրողի դառնությամբ ու անգործությամբ՝ վրա բերեց —

— Լավ, աղան ջան, եդ ել քո խոսքն ըլնի... համա... պայմանը յեփ կապենք:

Պայմանս վորն ա, իմ խոսքը քեզ պայման: Բա ամոթ չի գլխիս գդակին ու ես բեխերի հմար... Մենք մեր մեջ հաշիվը կը թամրվենք, թե չե, դրսում, ամեն շուն-շանգալ պտի իմանա ու մեջը խառնվի...:

Նա ամուր բռնելով Արո ապու ձեռքը մի քանի անգամ թափ տվեց ու խորամանկ ժպիտով վրա բերեց —

— Խեր տեսաս, Արո, սպեր ..

— Խեր տեսաս...

Ողու բաժակները հաստատեցին պայմանը և Արո ապին իր միակնեցուկ ձեռնափայտին հենվելով, համրաքայլ հեռացավ իր «բարերարի» տնից: Վորդու բացակայությունը նոր ծանր թվաց նրան:

Նրան թվաց, վոր Գարսևան աղի տանը կորցրել եր վորդուցն ավելի թանկագին մի գանձ...



2761 57

3.

Աշունը դեղին եր ներկել գյուղի պույգ բար-
դիների կատարները:

Հանգի կանաչ խալիչի գույնն ել թռել եր յե-
րեսից:

Մոտակա պուրակի ծառերն ու թփերը վու-
կեկարվիր գույների մեջ վառվում եյին: Տեղ-
տեղ բրնձագույն, տեղ-տեղ վուսկեգույն, տեղ-
տեղ ծիրանի, փովել եր պուրակը մանիշակագույն
ու բաց կապույտ լեռների ֆոնի վրա:

Պուրակում մեկ-մեկ նկատվող, վառ կարմրին
սովող ծառերը՝ դրոշակներ լինեն ասես, վորոնց
շուրջը խմբված, վոնց վոր ցույց են սարքում
արևելյան ալլատարը ու ալլատարազ մասսաները:

Աշնանային քամին հոռ անելով պուկ եր գա-
լիս դեմի ցորնագույն սարի կատարիցը և հար-
ձակվում կառուրներին նստած խոտադեղերի վրա:

Յերբեմն ել դադաղում եր նա, գյուղի շների
նման:

Հարձակվելով բազկատարած ու անոգնական

դյուղի վրա, նա ծեծում ու բզկատում եր փա-
փախները խրճիթների:

Իրար խառնում ցածլիկ խրճիթները և ծուռ
ու մուռ փողոցները:

Հանդիմանության համար ասես, հավաքում
եր փողոցների աղբն ու փոշին և ջղայնությամբ
դուրս շարտում բաց դռներից, նեղլիկ պատու-
հաններից ու յերկնահառ յերթիկներից:

Ապա հանգարտորեն շոյելով հանգիպակաց
բլուրների ճաղատ գագաթները, հեռանում, կոր-
չում եր մոխրագույն անհունում:

Գոմեշները՝ միորինակ ու հայ գյուղի դան-
դաղությամբ, քաշ են տալիս ճռնչացող վերջին
յերկանիվ սայլը, հանգի վերջին բարիքովը բեռ-
նավորված:

Մանկահասակ աղջիկները մոտակա պուրա-
կից տուն են բերում գետին թափվող վուսկեկար-
միր տերևները:

Իսկ պատանիները դաշտից սեզ ու փուշ են
կրում, ձմրան թոնիրներին ընծա:

Աշնանային գյուղն աշխուժ ե ու չեռուն:

Պատերի տակ, փամի բակում, գյուղի «մեյ-
դան»-ում, խումբ-խումբ հավաքվել, շրջան են
կազմել, բեխավոր, թե անբեխ, մեծ թե փոքր
գյուղացիներ և ամբողջ ուշադրությունը բևեռել

վեզի չորս կողմերին:

Մի տեղ վեզերն են չբխկչբխկում, մի այլ տեղ ընկույզի հարյուրավոր հարվածներ են տեղում հողի յերեսին տնկված 10 կոպեկանոց արծաթի շուրջը:

Յեւ այսպես վեզի ու ընկույզի հետ կենդանի խոսակցությունն է փովել փողոցներում, բազմատեսակ ու յերբեմն դեռ անտիպ հայհոյանքներով համեմված:

Իսկ յերեկոյան գոմերում ու ուղաներում Շահ-Իսմայիլի, Լեյլի-Մեջնունի և Աշուղ-Ղարիբի հեքլաթներն են կարկաջում անսպառ ու խրճիթ-ընթերցարանում, սեով նախշած թղթի վրա կընացած, բոտորակը բառեր է քանդում, վոնց արոր՝ կորթ հողը:

*
* *

Որը կիրակի յեր:

Ձիերն ասպանդակելով և յետևից փոշու թանձր ամպ թողնելով, գլուղ հասան յերկու կոմ. յերիտականներ, բերքի տոնի կամպանիան անց կացնելու համար:

Դեռ գլուղը չմտած, ճամբեղրին, նրանք հանդիպեցին քարի կողքին պըպզած մի ծեր գլուղացու:

— Բարաջողում, բիձա...

Աստու խեր բարին: Ումուտ ջան, գիտամ քաղաքից եք գալիս, յես ձեր եկած ճամբին դուր բան, բա քաղաքում իմ Արտոյին տեսնեք վոչ:

— Բիձա ջան, չենք ճանաչում:

— Վոնց չեք ճանաչում, ախրը նա յեւ ձեզ նման դոշին նշան ուներ, ու «պճիճ» եր: Եկու ամիս ա ինչ քաղաք ա գնացել, համա հեջ ջուղաք չունեմ. աչքս ճամբին ջուր դառավ. ամեն ուր ես քարի կշտին պըպզած, թամաշ եմ անում, վոր մի լավ ճամբորդ, ձեզանից լավը չլի, մի քարի խաբար բերի իմ Արտոյից: Մեկ մեկ եւ միտք եմ անում, թե վե կենամ քաղաք գնամ, համա ես անտեր վոտները հետս չեն գալիս:

— Ինչո՞ւ յե քաղաք գնացել, բիձա:

— Գնացել ա վոր կարգա, մարդ դառնա, յես իմ...

Նրանք շուռ տվին քրտնած ձիերի գըլուխները:

— Ումուտ ջան, եւ յես քաղաք գնալիս, թե կը տենաք իմ Արտոյին, ասեք թող թեզ հասնի իր հոր հավարին. ասեք վոր կովը ծախել եմ, արտն եւ տվել Գարսևան աղին:

Նրա ջրակայած աչքերից արցունքի յերկու կաթիլներ, ցցված ախոսիւրների վրայով իջան ու թաղվեցին թավ միրուքի մեջ:

Արո ապին դեռ յերկանր նայում եր ձիա վորներ յետեից:

4.

Այնտեղ, ուր իրար խաչաձևում և անկյուններ են կազմում քաղաքի յերկու բանուկ փողոցները, հենց այդ անկյուններից մեկի մի հարկանի տան մեջ, տեղավորված ե կոմյերիտ-միության գավառային կոմիտեն:

Նրա մեջտեղի մեծ սենյակը, ուր իրար դեմ դեմի դրված են մի բանի սեղաններ՝ նոր բացված կոոպերատիվի նման, միշտ լի չե հաճախորդներով:

Սենյակը համեստ ե ու հասարակ:

Պատերին նկարներ.—

Լենին,

Ստալին,

Մաքս,

Մյասնիկյան:

Պատերին կոշտ տառերով տպած պլակատներ.—

ԲԱՐՁՐ ԶԻՈՍԵԼ

ԳՈՐԾԴ ՎԵՐՋԱՅՐԻՐ, ԳՆԱ

և այլն:

Միալար ու անխուսափելի հնչում է գրամե-
քանայի չխշխկոցը:

Այդ նույն սենյակում բացվող դեմի դռանը,
յերկարավուն ու սպիտակ ներկած թիթեղի վրա,
կարմիր տառերով փալլում է. —

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ներսում, թեք դրված սեղանի մոտ, գլուխը
թղթի կույտի վրա ծռած, քրքրում, կարգում,
մտածում, վերցնում զրիչը, քիչ մտածում ելի,
ու ապա թղթի մի անկյունին, ծռու կերպով ինչ
վոր բաներ է մակագրում մի յերիասասարգ:

Նրա բարակ բիթն ավելի չէ դուրս ցցվել
փոսկրոտ ալյաբից:

Ներս ընկած աչքի խոռոչներում փալլում են
սև ու շարժուն բիբերը, վորոնք ավելի չեն վառ-
վում, չերը նա բարկանում է:

Իսկ այդ հաճախ է պատահում:

Գալիս են, ամեն որ նույն մարդիկ, նույն
խոսակցությունները և նույն պահանջները:

— Հընկեր քարտուղար, գործազուրկ մե-
ռանք ե...:

— Ընկեր քարտուղար, սենյակս փուլ լեկավ,
դուրսն եմ մնացել:

— Ինձ աշխատանքից կրճատեցին:

— Յեղբորս դպրոց չեն ընդունում:

Յե՛վ ալսպես անվերջ:

Շատերը խոսք չեն հասկանում, համառում են
ու «հնկեր քարտուղարի» աչքերի սպիտակում լո-
ղացող ածուխի կտորները վառվել են սկսում:

Արտոն ել պատվավոր տեղ է բռնել նրա հա-
ճախորդների շարքում:

Գալիս է: Կամացուկ բացում դուռը, դեռ զը-
ռան մոտից հանում կարկատած կեպին, ավելի
ցըցում մեծ ականջները, խոնարհաբար բարևում
ու անխոս, պահակի նման ձեռները կողքերին,
կանգնում սեղանի մի կողմը:

— Դեռ դու եստե՞ղ ես, դեռ դուդ չգնացիր:

— Ախր գյուղ գնալով բան չի դառնա, հըն
կ եր քարտուղար, մի գործ սուր ապրենք ու քո
երեսից մարդ դառնանք... Ըսենց անգործ մե-
ռանք ե... — Կամացուկ թոթովում է նա, ավելի
շեշտելով «հընկեր» բառը:

Յեա քեզ վաղուց եմ ասել, վոր գործ չու-
նենք, թող, գլուղ գնա ու տնտեսությանդ մեջ
աշխատիր:

— Բա վոնց պտի ըլնի մեր ճարը, բա մենք

ուսումնաւոր չպատկերէր, բայց մենք չպատկերէր լուսաւորութիւնը, հա ըսենց մութ ու խաւար պատկերէր... ես ա ձեր «իրեաներս դեռ գիտէի» լուսաւորութիւնը:

— Հմի վոնց անենք քեզ հետ, յետ քեզ ենք քանակութիւն, գիտէի զնա ու գիտէի իրաւունքս, եւ սոքորի, բայց դու լայնը չես անում: Թե «յերեաներս դեպի գիտէի» ասելով հասկանանք, վոր գիտէի կոմիտէականներին քաղաք պիտի բերենք ու պաշտօններին դնենք, բայց գիտէի զնա ու ով պիտի կռիւն կռակի դեմ, եւ ով պիտի տարածի կոմիտէականութեան ու խորհրդային իշխանութեան գաղափարները:

— Հ'ըմ—վրա բերեց Արտոն: Պատասխան տուաւ՝ դժուար էր:

Ամեն ոք եր գտնիս նա, ամեն ոք գտնաւորութիւն ու ամեն ոք գլխիկոր հեռանում...:

*
* *

Յերկու ամիս շուրջ եր յեկել արդեն:

Արտոն դեռ անգործ թափառում եր քաղաքում: Ինքն եր հիմա մտածում իր գլխի ճարտեսներ, վորովհետեւ քաղաքացիներն եւ ինքն մեծագոյն պատասխաններն եր տալիս:

Նա ինքն եր ամբողջ ուրը շրջում հիմնարկից-

հիմնարկ ու գործ փնտռում:

Յերեկները շրջում եր փողոցները, իսկ գիշերները՝ կռիւն, յեկած, քնում կոմիտէի շէնքի միջանցքում: Բայց դեռ յեղանակը տաք է, իսկ թե ձմեռն էլ ես դրութիւնը շարունակվի, ինչ կլինի նրա ճարը:

Փոխադրութեան դրամարկից արված կոպէկները փոր չեն կշտացնում:

Հիմնարկութեանները միշտ միեւնոյն մերժողական պատասխանն են տալիս, իսկ քաղաքացիներն եւ՝ «մի կողի ընկած», գոռում ե թե գիտէի զնա:

Ինչ անի Արտոն: Թողնի գիտէի զնա: Ինչպէս զնա: Իսկ իր հեռանկարները: Չե՞ վոր գիտէի զնա: Բայց կը ծիծաղեն, յերեւտվանք կանեն: «Խընքոտ Խաչոն» ու «չոփուր Սարոն» կսկսեն ձեռք բռնել «քաղաքի» Արտոնին:

Դռնից ներս մտնելիս, հետ-հետ քաշված սեղանները ճամբա յեն բացում դեպի տրեստի նախագահի առանձնասենյակը:

Առանձնասենյակի պատերն այնքան մոտ են իրարու, վոր յիթե անզգուշորեն յերկու քայլ առաջ գնաս, քիթդ պատին պիտի խփես:

Հասարակ ու չոր աթոռի առաջ չորած նուշան հասարակ սեղանը, զրասեղան ե հիշեցնում այնքանով, վորքանով նրա մի ծայրում ընկել ե մի փոքրիկ թանաքաման, մածուցիկ ու բավական պինդ մի հեղուկ մեջը լերդացած: Իսկ դա չեւ հիշեցնում ե, վոր թանաքամանում մի ժամանակ թանաք ե լցված չեղել, բայց անցել են ամիսներ, թանաքը կամաց-կամաց շոգիացել ե, փոշին իջել, նստել ե նրա մեջ ե հեռագհեռե մերել այն, պնդացրել: Փոշին մի նուրբ սփռուց ել սեղանի յերեսին ե փռել, վորի միապաղաղությունը տեղ-տեղ լսանդարվել ե ինչ վոր մասների ու ձեռների զրոշմներով: Թանաքամանից բիշ հեռու,

խռովածի նման, պոչը քաշել ու ընկել ե գրչակոթը, վորի ծայրի չերկու մասերն իրար վրա հեծած, կարծես սպառնում են այլևս վոշինչ չանել, յիթե դեպի իրանց ցուցադրվող անտաղբեր վերաբերմունքը չփոխվի:

Առանձնասենյակի խորքում, բարձր դարակի զլխին, փոշու գորշ ու թափանցիկ բողով ծածկըված, ընկել ե Լենինի կիսանդրին, մի քանի «գործ»-երով ու զրքերով շրջապատված:

Սակայն բոլորովին փուլթ չի Սանթրոսյանին, թե թանաքը մերվել ե, թե գրչակոթը՝ ծայրը ծայրին հեծցրած գործադուլ ե արել, կամ թե Լենինի կիսանդրին փոշոտվել:

Առաջինների կարիքը նա հազվադեպ ե ըզգում, իսկ Լենինն ել՝ իր սրտումն ե քանդակված, վոչ թե այդ գաճի մեջ:

Յերբ նրան հարկավոր ե լինում ներկայացրած գրութչան վրա մակագրել—«բաց թողնալ» կամ «ուշ թոււնել», վերցնում ե գրչակոթը, բութ մատի յեղունկի վրա փորձում մի կերպ ուղղել նրա խռոված ծայրերը, թաթախում մածուցիկ հեղուկի մեջ, ապա՝ բթամատի ու ցուցամատի չեղունկների ծայրերով մաքրում ծայրից կախված մազն ու լերդացած փոշին, ե հաստ ու անհամաշափ գծերով խազվում

հեղինակավոր մակագրությունը: Իսկ յեթե այս արարողությունը շատ ձգձգվի, կամ գրչակոթը համառորեն պնդի իր «գործադուլի» վրա, ծալ-րեբը չմիացնելով, նա ջղախնությամբ դեն և շարտում «քու տիրոջ հերն ել անիծած» ուղեր-ձով, գրպանից հանում բթածայր քիմիական մա-տիտը, լեզվով ու շրթունքներով թրջում, բե-րանում թողնելով անհաճելի համը, և մակագր-րումն ավարտում:

Սանթրոսյանը գրչի կամ մատիտի կարիքն իզուր և չեբը մակագրումներ և անում, իսկ յեթե դրանք ել հնարավոր լինեյին անել մատ-վոր կերպով, ապա ընթերցողը նրա սեղանի վրա վոչ բորբոսնած թանաքաման կը գտներ և վոչ և «գործադուլավոր» գրիչ:

Իր ամբողջ հաշիվները նա մտքումն և ա-նում և մատների ոգնությամբ:

Նրա ուղեղում պառկած կան և՛ մայր մատ-յանը, և՛ «բալանսները», և՛ պարտքերի մատյան-ները, և՛ վերջապես, ամբողջ գրասենյակային մի արխիվ:

Ամեն առավոտ, գրասենյակ մտնելիս, նա հիշում և, թե այդ ուր վոր պարտատերին պիտի այցելի և ինչպիսի անակնկալներով կամ հայհո-յանքներով պիտի դիմավորի նրան: Յերբեմն ել

նա հեռախոսի լարերովն և հաղորդակից դարձ-նում իր հայհոյանքն ու բարկությունը, ան-պարտաճանաչ պատվիրատուներին:

Պատմում են թե ինչպես մի առավոտ, նա գործարան և գալիս բավական բարկացկոտ, կան-չում տեղկոմի քարտուղարին և վորակավոր բան-վորներից մեկին ու հրահանգում. —

— Ո՞ւր կը գնամ յեկեք:

— Ի՞նչ և պատահել ընկեր Սանթրոսյան:

— Հմի վախտը չի, հետո կիմանաք:

Նրանք բավական շփոթված ու անակնկալի յեկած հետևում են Սանթրոսյանին:

Ահա ներս մտան մի բավական պատասխա նատու հիմնարկություն:

Սանթրոսյանը գնում և առաջից:

Իեմը ջղախնության ու ալլալվածի արտա-հայտությամբ, նա ներս և մտնում հիմնարկության պետի առանձնասենյակը: Յերբ տեղկոմի քար-տուղարն ու բանվորը պատրաստվում են ներս մտնել, նրա յետևից, Սանթրոսյանը յետ և դառ-նում ու ուղմբի նման պայթում նրանց վրա. —

— Բոլ ա, հոգիս հանեցիք, հո՛ չիք սպանիլ տալ-տա, որինակի համա, չեք թող անում բնեմ, առավոտը թեզ գալիս, բկիս եք չոքում ու չեք թողնում շորերս ել հագնեմ: Որինակի համա դու

ինչ տեսակ տեղկումի քարտուղար ես, վոր չես կարա բանվորներին համոզիլ տալ-տաս: Գործադուլ են անում հա՛յա շատ բնվորոջ ա, ի՞նչ անենք, որինակի համա թող մի շաբաթ ել ուշ ոռճիկ ստանան: Տաղիբելին չլինի, տասնհնգին չլինի, թող քսանին ըլնի, որինակի համա, ինչքան ել վոր ուշանա, աճնուամենեկն ընդրանց փողը չի կորչի: Գնացեք, գնացեք ձեռները կըտրել տալ-տալ տվեք, որինակի համա հալբաթ ընկեր Չուվարյանը մի բան կանի:

Քարտուղարն ու բանվորն սկզբում անակընկալի յեկան, բայց հետո իմանալով բանի ելուծյունը և ծանոթ լինելով Սանթրոսյանի նման խաղերին, — հմուտ «ռեփրսոյ»-ը դեկավարու-թյամբ, սկսեցին կատարել իրենց դերերը:

Յերբ նրանք Սանթրոսյանի հասցեյին բանվորների, («գործադուլավոր» բանվորների) անունից մի շտրք պահանջներ ու սպառնալիքներ անելուց հետո, հեռանում են, Սանթրոսյանն ավելի հանդարտ կերպով իր պարտատերին է դառնում. —

— Ընկեր Չուվարյան, դրուժյունս շատ բնվորոջ ա, աչքովդ տեսար, որինակի համա ես մի շաբաթ ա բանվորներին փողն ուշացրել եմ, որինակի համա սավայի եդ երկու վեքսիլ ել պըռտե ստ ա գնում, ասում եմ եսոր են պարտ-

բերը տայիք, վոր գոնյա եդ վեքսիլները թափիլ տալ-տամ ու բանվորներիս ոռճիկը բաժանիլ տալ-տամ: Որինակի համա, ե-լախտը դու հո տեսար ինչ ին անում:

Այսպես եր նա հաճախ անակընկալի բերում իր անպարտաճանաչ պատվիրատուներին ու գանձում ապառիկները:

* *

Սանթրոսյանը վաթսուներկու մոտ է: Կարճահասակ, կրոր դեմքով:

Հին բանվոր է, կոփված բանվորական շարժումների ու մի շտրք հայտնի գործադուլների մեջ:

Նրա աչքերում՝ խորամանկութունն է ամբարված, իսկ սրածայր կարճ միրուքից՝ կախվել է առաքինութունը:

Տարիները ակոսներ են շարել ճակատին ու հղկել, վառվող փայլ են տվել գանկին:

Բանվորակոն տարիներում կազմած ունի հայհոյանքների պերճախոս մի բառարան:

Այդ հայհոյանքներից նա բաժանում է թե՛ ընկերական և թե՛ սաշտոնական խոսակցության ընթացքում, թե՛ գործարանում, թե՛ գրասենյակում:

Ծնողա..., վորակավորվեցեք, վորակավորվեցեք...

Բանվորները մտերմական հավաքույթում, մի պոետ աչպես գրեց Սանթրոսյանի մասին. —

Միք նայի գլխիս քաշալ,

Միբուքիս ծուռ ու կնտած,

Թե ուզեմ կը դառնամ խանչալ —

Ամենքի ջանին ընկած:

Արտոն արդեն յերրորդ անգամն է, ինչ Սանթրոսյանի գրասենյակն է գալիս:

— Հընկեր Սանթրոսյան, Կոմիտեն ասըմ է թե ձեզ մոտ աշկերտի տեղ կա:

— Ե՛հ, Կոմիտեն ել գլխներս տարավ, ելի՛: Մի գլուխ գրում ա — սրան ունթունի, նրան ունթունի, յետով ել կարգադրում թե բրոն ունթունի: Դու բրոն ես:

— Ձե, յես աղքատ գյուղացի յեմ, հընկեր Սանթրոսյան — վրա բերեց Արտոն, չիմանալով թե «բրոն» ինչ բան է:

— Եդ իմ վեջը չի թե գյուղացի յես, կամ քաղաքացի, բրոն ես թե չե, դու եդ ասա:

— Բրոնը չեմ գիտում ինչ ա:

— Լավ, քանի՞ տարեկան ես:

— Բսան:

— Ե՛հ, եշի թաչ ես, ունթունել չեմ կարող: Որինակի համա թե բրոն ըլեյիր, ելի մի բան կանեյինք:

Արտոն հեռացավ գլխիկոր, մաքում իրեն հանդիմանելով թե ինչո՞ւ առաջին հարցին չպատասխանեց — «հրամանք ես, հընկեր Սանթրոսյան, բրոն եմ»: «Թե բրոն ըլեյիր, ելի մի բան կանեյինք.» այդպես ասեց Սանթրոսյանը:

Բայց Արտոն Սանթրոսյանից ավելի պնդերես դուրս չեկավ. այնքան գնաց յեկավ, այնքան հայհոյանք կերավ, բայց չընկճվեց, և գուցե նըրա այդ պնդերեսութունն ու անդրդվելիութունը Սանթրոսյանին համոզեցին, վոր այդ գյուղացի յերիտասարդից լավ բանվոր դուրս կը գա:

Դրա համար ել, մի որ նա Արտոնի ներկայացրած դիմումի վրա մակադրեց. —

«Ունթունել»:

Ապա գրասենյակի դուռը փակելով, ըստ սովորականի սկսեց նրա «փեշը քաշել» (խրատել հասկացիր, ընթերցող, ըստ Սանթրոսյանի բարարանի):

— Սեյլը գլխիդ հավաքի, բան սովորի: Որի-

նակի համա ձեր կոմսոմոնները շատ են սիրում
«ըստ եութան», «ըստ կարգի» խոսալ, նրանց
ա՛ք չաաս, գլուխդ քաշ արա ու քեզ համա աշ-
խատիր: Վորակավորվիր ծնողա....

«Փեշը քաշելու» արարողությունը հայհոյանքով
ավարտվելուց հետո, Արտոն սւրախ-ուրախ վերց-
րեց հեղինակավոր մակագրությամբ դրոշմված
իր դիմուժը և զլխաբաց, ականջները դուրս ցը-
ցած խորին շնորհակալությամբ ու չերախտազի-
տությամբ շոյելով Սանթրոսյանի սիրտը, դեպի
գործարան շտապեց, ուր նրա առաջ բացվեց մի
նոր աշխարհ:

6.

Յերբ Արտոն գործարան մտավ, բանվոր-
ները դազգյահների ու մեքենաների շուրջը թափ-
ված նախաճաշում էին:

Այնպիսի յեռանդով ու ազահությամբ էին
կրծում նրանք մրոտ ձեռներում բռնած հացը,
պանիրն ու չերշիկը, վոր ասես շաբաթներով
հաց չէին կերել, կամ «սովիցն էին պրծել»,
վոնց վոր ժողովուրդն է ասում:

«Յեզին հաց ուտողը՝ յեզին էլ դործ կանի»,
այդպես էր ասում Արտոյի հայրը: Այդպես էլ
մտածեց Արտոն, չերբ կամացուկ ու ամուշկոտ
նրանց բարեկեց հետո, քաշվեց ու կանգնեց
մի պատի աակ:

«Թե վոր եգ ուտելուն գյորա յի՛ յեզին
բանեն, համա վա՛ն եկել ա իմ սրին, դժար թե
դրանց հետ գլուխ հանեմ» — մտածում էր Արտոն,
չերբ բանվորներից մի քանիսը հարցական հա-
լացքներով դեպի նա դարձան:

Բայց ինչքան ուրախ են նրանք: «Ասես աշխարհի յերեսին հեշ դարդ չունեն»:

Մի կողմից ուսում, մի կողմից խոսում, կատակում, հրահուում:

— «Յերանի դրանց...»

Յերիտասարդ բանվորներից մեկը թեյի բաժակը ձեռքին, մեջաեղում կանգնած «Ոթելլո» յե խաղում:—

— «Յեթե իմանամ վայրենացել ես իմ թրուշնակ, բաց կանեմ վանդակի դռները... վանդակի դռները...»:

Չեղավ: Գլուխ չհկավ: Հուշարար չկա: Ապա իսկույն շուռ տվեց—

— «Աղջի Ուստյան, մի ես ճանճերը բշիյեե... եդ ել յես անեեեմ...»:

Յերիտասարդները հոհուում ու ծափահարում եին: Իսկ հասակավորներն՝ ինքնապարար ժպտով նրանց նայում, յերևի ամեն մեկն իր յերիտասարդությունը մտաբերելով:

Բայց կատակի ու «ներկայացման» հետ միասին, նրանք լավ դադել ել գիտեն: Բավական եմի վատ բան արիր, մի «արատ» ունեցար, ենքան «ձեռք առնեն» ենքան ծիծաղեն, ենքան խաղաղանեն, վոր շվարես ու պատասխան տալ անկարող լինես:

Միշտ ել «քավություն նոխաղը» Սեդրաչի ու Արսենն են դառնում:

Սրանցից առաջինը՝ խոզեր ունի պահ տված գյուղում, իսկ յերկրորդը՝ քաղաքում աչգի ունի ու մի կով:

Մեկ ել տեսար, յերբ «Ոթելլոն» կամ «Քաջ Նազարը» վերջացավ, խոսքը մեկ արած սկսեցին—

(Թեկուզ ձմեռվա կիսին)

— Արսեն վհնց ա, հաղողը հասել ա...

— Մաճառի վեդրոն քանիսով ես տալիս...

— Ասում են Արսենը միկիտան ա բացելու և բաղի մաճառը ինքն ա ծախելու:

— Համա, տղի բաները փիս ա, ասում են հերվա գինին քացախել ա...

— Տղի մերը չմեռնի, դայդեն գիդա, հետը ջուր կը խառնի կը ծախի:

— Խաղողը չոռ տվել ա...

— Խեղճ տղա, քուլֆաթը սովից կտառվելու է, հա...:

— Կովին ջանը վողջ միս ջանում, դուն հոգ մի ընեք Արսեն:

— Արսեն կովդ ապահովագրի, սատկելիս՝ Պետապից ելի կը շփես, հա...:

— Ասըմ են Արսենն ըստարի միասնարկը չի տվե, Ուֆոն ել բազը զավթի պահ:

— Ինչ կսե... թափա կը ֆոսայնենք, աչ ողուլ, եզիկ վոր որվա բանվորական իշխանությունն է, որ բանվորին աջլամիշ են են:

— Ուֆոն ինչ իրավունքով ե կաշում բանվոր դասակարգի շահերին:

— Կեցցե բանվոր դասակարգի բազմանչին, կեցցե...

— Յերեսներս զեպի գլուզ: Յերեսներս զեպի խոզերը...

— Սեղրակին աշե, տեսնես գը, քեֆն եկավ... խոզերի խորաթեն երին...

— Ասում են ես տարի ամեն մի խոզը քսան ձուտ ա բերել...

— Հայ, հայ, շան աղի աղեն կուլակ ա գառնալու...

— Համա կասեն հըմեն մի խոզից խինգ մանեթ նալոյ կառնեն...

— Իրանից հո չի քյնալու, տրեուսեֆցն ա քյնալական:

— Իհարկե տրեստը սաղ մնա, մի հարյուր մանեթ ավանս բաց կը թողնի Սեղրակին... Պետք ե բանվորի դրո թլան մեջ մանեթ թե չե...

— Հարկավ, հարկավ...

— Մաշ...

— Յերեսներս զեպի գլուզ....

— Յերեսներս զեպի խոզերը....

Ումի քանի հոգի հոհալով, վրա տալով, գրկեցին Սեղրակին և սկսեցին քաշքշել:

Ջանգի հրամայողական ձայնը վերջ տվեց կատակին, ազատեց «զոհերին» «դահիճներին» ճանկերից ու ամեն մեկն իր ստանոկի մոտ ըշտապեց:

Արտոն շվարած ու մտամոլոր, պատի տակ կանգնած, կրծում եր չեղունգները...

Վոնց վոր մի քանի որ գնացքով ճանապարհորդող ուղևորը վերջին օրն, չերբ նպատակադրած քաղաքին ե մտահոսում, սկսում ե անհամբեր ներս ու դուրս անել, պատուհանից նայել, նստել, նորից կանգնել, և ինչպես ժամանակը ծանր ու դանդաղ ե սահում նրա համար, այդպես ել, Արտուրի համար այդ օրը մեծ դժվարությամբ անցավ գործարանում:

Վոնց վոր ոտարության մեջ ընկած լեներ նա՝ Ոտարության, վորի վերադարձի բոլոր ճանապարհներն ասես փակված են անանցանելի պարիսպներով:

Շրջապատում ամեն ինչ խորթ, ոտար:

Մեծ մտավախությամբ եր նայում նա հսկայական մեքենաներին, վորոնք յեկեքտրական կոճակի մի փոքրիկ հպումից՝ մռնչալ ելին սկսում ու սպառնում կարծես, կտոր-կտոր առել մոտ յեկողին:

«Վոնց ել ուխտ եմ անում, վոնց ել չեն փութում, դրա վրին կաղնողները» — մտածում եր Արտուն նույն մտավախությամբ:

Սակայն նրանք վոչ միայն Արտուրի նման չէին զարգանդում, այլ մինչև անգամ մեքենայի ութի մի հետ յերգեր ել ելին յերգում:

«Ձե Արտոն, ես մեկը քո բանը չի, թե հանդում մանգաղը ձեռքիդ վրա պրծներ, մի քիչ տեղը պիտի պլոկեր, համա թե եդ անաստված մաշինը վրա պրծավ, կորած, մեծ բրդուջն՝ ալ կանջդ ա թողալու»...

Յերկրորդ ու յերրորդ օրերն ել ծանր անցան:

Արտուն անհամբեր միշտ անցնում եր գործարանի դրասենյակի առջևով և աչքի ճոթով, թաքուն, ժամացույցին եր նայում, թե՞ քանի ժամ կա դեռ, կամ յերբ կը գա «շաբաշի» ժամանակը:

Ժամերը ծանր են սահում: Վարպետ Նիկոլոսն ել Արտուրի դուրը չի գալիս: Պոչավոր ակնոցները տակից, աչքերը չռած, նա անդադար մտիկ ե տալիս թե ուր ե գնում, կամ ի՞նչ ե անում Արտուն:

«Ես ինչ գերություն ա ախպեր — մտածում եր Արտուն, — թամամ վոր գերություն... ընենց ա վարավուրդ անում, ընենց ա թամաշ անում,

վոր չէս ել կարում վոտաց ճանապարհ գնաս,
թո՛ւհ, ես ինչ թարս մարդի ոտսա եկանք...»

Վարպետը կամաց-կամաց նրան «լծեկ» սկսեց:
Թե առաջին որերը թողնում եր, վոր Արտոն
ման գա գործարանում, մեքենաները դիտի, ու-
սումնասիրի, իսկ հիմա արդեն գործի գրեց
նրան:

Արտոն ծանրություններ ե վոխաղրում, մե-
քենաներ մաքրում, չուղում, պտուտակները սրը-
բում:

Բաց ելի ժամացույցը չի մոռացել:

Գրեթե ժամը մի անգամ, կամաց կերպով
նա սողում ե զրասենյակի դռան առաջով ու
աչքի ճոթով տնտղում ժամացույցի սլաքները:

— «Հա՛յ, կոտրվեք դուք, հե՛չ տեղից ել ժաժ
չեն զալիս» — մտածում ե նա, չերը նրա կար-
ծած չերեքի փոխարեն, ժամացույցը մի ժամ եր
միայն առաջ գնացել:

Անցյալ որը բանվորները մի հետաքրքիր դեպք
պատմեցին: «Համա ինչ կլնեք, վոր հմի չեկ ըտենց
անեյինք...» մտածեց Արտոն:

Նրանք պատմեցին թե հին ժամանակը, չերը
գործարանը պատկանում եր խաղեյինին, խաղեր
եյին սարքում նրա զլխին: Յերը նա մի բոպե-
յով բացակայեք զրասենյակից, մեկ ել տեսար,

բանվորներից մեկը սողաց պատի վրա ու ժա-
մացույցը մի ժամ, կամ կես ժամ առաջ տա-
րավ... «Դե, գնա քեֆ արա...»:

Ժամերը ծանր են սահում, գործը դժվար ե,
իսկ վարպետ Նիկողոսն ել՝ հե՛չ Արտոնի գուրը
չի գալիս:

*
* *

Ըստ սովորականին, Սանթրոսյանն առավոտ-
ները բանվորների հետ գործարան եր գալիս:

Դեռ բանվոր ժամանակվանից, նա սովորել
եր արեից առաջ վեր կենալ:

Գործարանի զանգը հնչում եր ու յերկու
ժամ հետո միայն արեստի գրասենյակի աշխա-
տանքներն սկսվում ելին:

Սանթրոսյանն այդ յերկու ժամը գործարա-
նում եր անց կացնում:

Գալիս եր, կամ կառավարչի «փեշն եր քա-
շում» կամ տեղկումի քարտուղարի, կամ թե գոր-
ծարանի բաժանմունքներից մեկում՝ վեճի բըռ-
նրվում բանվորների հետ:

Բավական եր մեկին տեսներ գործը թողած
ընկերոջ հետը խոսելիս, կամ շրջելիս, իսկույն
վրա կտար:—

— Վհնց ա, կատիգորեն բարձրացնելու վախար,

որինակի համա, մի գլուխ վրա չեք տալիս, թե «պտի տաս», «պտի տաս»... վսնց ա, խի չեք տնդալուծյուն անում, որինակի համա, մի որ ել ասեք թե «պտի տանք» ե՛, տո ծնողա...:

— Մենք տալիս ենք, ինչ վոր մեր գործն ա անում ենք, համա դուք հեչ չեք մտածում մեր ռոճիկի ավելացման մասին: Թիֆլիսում ասում են մինիմումը 21 ռուբլի չա, համա մեզ մոտ մինիմումը եղի պոչ ա դառել, վոչ չերկարում ա, վոչ կարճանում. — մեջ եր ընկնում Սեդրակը:

— Բասն մեկ, չե մի բողբաշ, ով ասեց վոր Թիֆլիսում քսան մեկ ա... Հնդկըստանումն ել որինակի համա ասում են թե խուրմեն մուֆթա յա, տո ծնողա... վոչ եդ խուրմեն ենք տեսել, վոչ ել Հնդկըստանը...:

Նման առավոտները նա յերբեմն հագնում եր իր համար պատվիրել տված պահեստի խալաթը և կանգնած իր հին ընկեր, մեքենայի կողքին, սկսում եր աշխատել, կամ թե մեքենայի մասերը քանդել ու բացատրել յերիտասարդ բանվորներին:

— Զել տղերք եք, խելքներդ գլխներիդ ժողվեք, որինակի համա, «ըստ եութան», «ըստ կարգինը» վերջ տվեք, փեշակ սո-

վորեք: Վարակավորվեցեք, վորակավորվեցեք, ծնողա...:

Ինչպես ձուկը ջրում հաճույքով լող ե տալիս, այնպես ել Սանթրոսյանն ամբողջ ուրն, ու զիշերվա մեծ մասը լող եր տալիս տրեստի գործերում: Զկար նրա համար ավելի հաճելի բան, քան տրեստի հաշիվներն ու գործերը:

— 150 մանեթ կոժարեստից... 100 մանեթ թատրոնի վարիչից... 300 մանեթ «Արարատ»-ից...: Թո՛ւհ, են շունչանվորդի Աղաբեկն ևսոր փողը չբերեց — բավական բարձրաձայն խոսելով, ու մատների վրա հաշվելով արագ արագ կտրում եր նա փողոցները:

«Նրա փողն ուսողը՝ կը արաքվի» — այսպես ելին խոսում Սանթրոսյանի մասին:

*
* *

Արտուշի ընդունվելուց մի ամիս եր անցել, յերբ առավոտյան Սանթրոսյանը մոտեցավ վարպետ Նիկողոսին, բարեկց ու —

— Հ՞ը, վոնց ա սրա բանը — վրա բերեց, մատնացույց անելով Արտուշին — մի բան դուս գալիս ա, թե չե...

Վարպետը գլխով բացասական նշան տվեց: Սանթրոսյանն աչքերը կկոցելով, սկսեց վո-

տից մինչև զուլիս զննել Արտույին, կարծես առաջին անգամն եր տեսնու՞մ, և նոր եր գործի ընդունում նրան, ապա մի կողմ տանելով վարպետ Նիկողոսին, ականջին փսփսաց. —

— Թե կը տեսնաս բանի պետք չե, պոչը խուզիլ տալ-տու:

Հետո մոտենալով Արտույին, պատի մոտ տարավ ու սկսեց —

— Ծիտը խաբար ա բերել, վոր շատ ես անգալութիւն անում: Խելքդ գլխիդ հավաքի, փեշակ սովորիր, որինակի համա անգալների պոչը շուտ ա խուզվում .. Վերջը կը փռշտանես, հա...:

Թե վարպետի ակնոցների տակից չուած աչքերը և թե արեստի նախագահի խրատը, վրդովեցրին Արտույին: Ամբողջ որը նա այդ մասին եր մտածում —

— «Ես ի՞նչ կյանք ա, ախպեր, ես ի՞նչ ուրենք ա, քանի՞ խազելին, քանի՞ խոսացող կա գլխիդ: Չես իմանում վորին լսել, յա վորին ջուղաբ տա: Ըսենց ել բանվոր ական իշխանութուն կլի, վոր մի բանվորի գլխին քառասուն խազելին կա կաղնած...»:

Այդ մտքերը, Սանթրոսյանի սպառնալիքը, գործի դժվարությունը, ժամանակի դանդաղ սահելը, վարպետ Նիկողոսի խոժոռ ու անդուրեկան

նայվածքը՝ Արտույին շրջմածի դրության մեջ եւջին դրել և հենց դրանից եր յերևի, վոր նա մեքենան սրբելիս, անդդուշությամբ շուռ տվեց Ձ փթանոց բենզինի բակը և բենզինը շաղ տվեց գետնովը:

Ինչպէս գաղաղեց վարպետ Նիկողոսը:

Կարծես դարանակալ թշնամին սպանել եր նրա վորդուն, կամ թե հովազն եր հարձակվում իր զոհի վրա:

Պոչավոր ակնոցների տակից նրա աչքերը հրդեհվում և ասես դուրս ելին ուզում պրծնել ակնակապիչներից, իսկ կնճռոտ ճակատին քանդակվել ելին մանկան մատների հաստությամբ կապույտ յերակները:

— ...Կորիր աչքիս առաջից... արունդ թող թափեր եդ բենզինի տեղը... լակոտ... Յես քո հորդ հոգին...:

Անողնական զոհի նման, իր դահճից գութ հայցողի աչքելով, կըծկվել եր Արտոն պատի տակ և ջղայնությամբ կըծում եր յեղունկները:

«Փորձանք ա, պատահում ա, ցամլ ու փորձանքը մարդկանց համար ա ստեղծած, հո սար ու չոլի համար չի. .» — աչդպես եր ասում ապին, աչդպես ել մտածում եր Արտոն, բայց ասել չեր համարձակվում: Նրա շրթունքներն ու ծնոտը

դողում ելին և բառերը՝ խորաակվում կոկորդում:

Կոնֆլիկտը տխուր վերջացավ:

Հաջորդ որը, բանվորները «Տ ե զ կ ո մ ի հ ա յ-
տ ա ր ա ր ու թ յ ու ն ն ե ր» մակագրութունը կրող
տախտակի վրա կարդացին —

ՔԱՂՎԱԾՔ

Տ... Գործարանի ճեղկումի լեզ արագրական հանձ-
նաժողովի միացյալ ժողովի, վոր կալացավ 1924 թվի
մարտի 5-ի № 7 արձանագրություն

Լ Ս Ե Յ Ի Ն Ք	Վ Ո Ր Ո Շ Ե Յ Ի Ն Ք
2. Մինասյան Ար- տույի հարցը, վորը գործին վերաբերվում աշատ անփութ և ան- բարեխղճական և աշ- տոր ուղադրութուն չդարձնելով, թափեց յերկու փութ բենզինը: (Զեկ. վարպ. Նիկողոս)	2. Զգուշացնել Մինա- սյան Արտույին, գործին վե- րաբերվել բարեխղճական և անել նկատողություն բենզինի համար ու խիստ հանդիմանութուն և վեր- ջին անգամ զգուշացնել նրան: (Միաձայն)

Ժողովի նախագահ՝ (Վարդույան Կ.)

Քարտուղար՝ (Սեդակունի Լ.)

Իսկականի հետ ճիշտ և:

Տեղկումի քարտուղար՝ (Ստորագրութուն)

8.

Հենց վոր զանգի ձայնը հնչեց, Արտուն մեծ
ուրախությամբ հանում եր խալաթը, ավարտելու
համար թեկուզ մի րոպե պահանջող կիսատ գոր-
ծը թողնում, և լվացարանի մոտ վազում:

Չնայած գործարանի վարչությունը լվացվե-
լու սապոն եր բաժանում բանվորներին, բայց
և այնպես Արտուն և վոչ մի որ սապոնով չեք
լվացվում:

Մեքենայի յուղով ու մրով շաղախված ձեռ-
քը թրջում եր սառը ջրով, մի փոքր ճրմուռում և
խալաթի փեշով սրբելուց հետո դուրս շտապում:

Գործարանից ստացած սապոնը ինչպես և
գրեթե ամբողջ ուճիկը նա տալիս եր մոտիկ
խանութպանին, վորի մոտ ել ձաշում եր նա:

Գործից հետո, նա գրեթե ամբողջ որն այդ
խանութումն եր անցկացնում:

ձաշելուց հետո, թեք եր ընկնում խանութ-
ում և հաճախորդների շատության ժամանակ

յերբեմն ողնում կարսպէտ սղին (սլղպէտ ելին ասում խանութպանին)։

Միւրդ եր լցնում տոպրակում, կշռում եր և կամ թե գոլում ապրանքները։

Մեկ-մեկ ել պարապ ժամանակները իր համար, ինքն իր ձեռքով կշռում եր թութ կամ ծիրան, իսկ ձմեռները չամիչ, ընկուլդ, ու դառնում խանութպանին թե —

— Կարապետ աղա, գրիր մեկ ֆուշտ ծիրան...։

Դեհ, Կարապետ աղեն ել գրում եր վոնց վոր ինքը գիտեր։

Նա շատ գոհ եր Արտոյից։ Նա վոչ միայն խանութի մշտական հաճախորդն եր, այլև իրա ոգնականը։

— Քո տան պէս չեղիր, խանութը բոնն ա, Արտո ջան—ասում եր նա, և Արտոն ինքն իրեն հրճվում եր։

Ընթրիքն ել խանութումն եր անում Արտոն։

Հաց ու պանիր, կամ հաց ու մածուն եր ուտում, կրկին ոգնում Կարապետ աղին և կէս գիշերին մոտ՝ «բաշի գիշեր» մաղթում նրան ու գրնում քնելու։

Քսում եր բանվորական հանրակացարանում։

Այնքան կեղտոտ եր ապրում նա, վոր վողջ հանրակացարանն այդ մասին եր խոսում։

Համոզում, խրատում ելին նրան, բայց ոգում չկար։

Գյուղից յեկած սրից նա վոչ մի անգամ վոչ ուլացել եր, վոչ ել շորերն եր փոխել։

Քնում եր հաճախ առանց շորերը հանելու ու վեր կենում շորերով։

Առավոտները վեր եր կենում, աչքերը ճրվռում և առանց լվացվելու վաղում Կարապետ աղի խանութը, մի մեծ բրտուճ վոլորում և կրծելով մանում գործարանը։

Նա գյուղից յեկավ սովորելու պատրվակով, բայց սովորելու վրա և վոչ մի ուշադրութիւն չգարձրեց։

Բջիջը նրան առաջարկեց գրել կարլալ սովորել։ Տեղկոմը միջնորդեց լիկկայան ընդունվելու համար, բայց նա լիկկայան և միայն յերեք որ մնաց։

Ուսուցչուհին բացատրում եր տառերը և ապա այդ տառերը կապելով սովորեցնում կարլալ—

— «Գյուղը կանգ նի, գեւան կըկոտրի»։

— Եդ յես գիդած, վոր գեղը կանգնի գեւան կը կոտրի—մտածում եր Արտոն ինքն իրան—բան կա բան ասեք, թե չե գուր տեղ բե-

լինէր ցափայնում եք, թե գեղը կանգնի գերան կը կտորի: Ետ ա ելի՛ւ...

Յերրորդ որը նա ուսուցչուհուն դիմեց թե —

— Որբորդ, իմ ազգ ու անումը սովորացրեք: Եդ ա ինձ պետքը:

— Յեթե բոլոր տառերը լավ սովորեք ձեր ազգ ու անունն ել, դեռ բոլորի ազգ ու անուններն ել կարող կլինեք գրել:

— Ուրիշներին չեմ ուղում, դու իմ ազգ ու անումը սովորացրու...:

— «Ազգ ու անումը թե սովորեցի են վախտը հեշտ ա, ինքս ձեռք կը քաշեմ ու ժալովնիս կստանամ, թե չե ինչ ա ամեն վախտ սրան խնդրի, նրան խնդրի, վոր քո տեղակ ձեռ քաշեն ու ամեն մեկն ել իմանա թե ինչ ես ստանում...» — մտածում եր Արտոն:

Ուսուցչուհին ընդառաջելով, մի կես ժամ առանձնապես նրա հետ պարապեց ու սովորեցրեց գրել անունն ու ազգանունը:

Ամբողջ յերկու որ Արտոն գբաղվեց իր անուն ազգանունը գրելով—ՉՆՉԵԼՈՎ:

Գործի ժամանակ, մեկ ել տեսար վերցրեց մի թղթի կտոր ու բռն ժատիտով սկսեց խաղմզել—

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն...

Ել լիկկայան չհաճախեց Արտոն: Նա մեծ բարեխղճութամբ իրեն ավարտած համարեց և սկսեց պատերի ու տախտակների վրա անընդհատ խաղմզել —

Ար տ ո Մ ի ն ա յ ա ն

Ար տ ո Մ ի ն ա ս յ ա ն

Ա տ ո Մ ի ն ա ս ա ն...:

* * *

Ընկերները շատ ելին համոզում Արտոյին վոր մի քիչ հեռու մնա կարապետ աղի խանութիցը: Լիկկայան հաճախի, ուշադրութուն դարձնի մաքրության վրա, բաղնիք գնա, սպիտակեղեն փոխի, բայց ոգուտ չեր անում:

Կոմյերիտովության բջիջն ու տեղեկոմն ել զբաղվեցին այդ խնդրով:

Բջիջում ընկերները շատ մտերմաբար մոտեցան Արտոյին, նրան մանրամասն բացատրեցին մաքրության և սովորելու անհրաժեշտությունը:

Բոլորը խոսեցին, բոլորը հասկացրին, թե նրա բռնած ճանապարհը ուր ե տանում:

Կոմյերիտովի Լիդան նու յնիսկ հանդիմանեց Արտոյին:

Կարծել ու քրտնել եր Արտոն: Մտքում քննադատեց իրեն ու մի խոսք անգամ չգտավ պատասխանելու: Յեղուկներն եր կրճում:

— Վորոշումները բավական չեն պետք ե տվելի կոնկրետ միջոցների դիմել: Յեռ առաջարկում եմ հանձնարարել մեր լավ ընկերներից յերկսին միշտ լինել Արտոյի հետ: Զբաղվել նրանով և նրան ավելի կապել մեր աշխատանքներին—առաջարկեց Գարիկը:

— Ճիշտ ե:

— Ճիշտ ե ասում:

— Համաձայն եմք:

— Բոլորս ել համաձայն եմք:

— Առաջարկում եմք այդ պարտականությունը հանձնարարել ընկեր Գարիկին և Վարդանին:

— Ամենայն սիրով—վրա բերեց Գարիկը:
Բոլորը կողմ քվեյարկեցին ու ծափահարեցին:

*
*
*

Գարիկն ու Վարդանը մեծ բարեխղճությամբ հետևում եյին Արտոյին:

Նախ խորհուրդ տվին հեռու մնալ խանութպան Կարապետ աղից:

Առաջին ուրերն իրենց հետ Արտոյին բանկոտյի ճաշարան տարան և հյուրասիրեցին:

Ճաշարանից հետո, նրանք միասին Գարիկենց տունն ելին դնում, քիչ հանգստանում ու քաղաքական և կոմյերիտական խնդիրներով զբաղեցնել սկսում Արտոյին:

Զրուցում եյին նրա հետ: Կավալենկոյից կարդում ու բացատրում, անեկզոտներ պատմում ու ժամանակն անցնում եր:

Անեկզոտներին նա լավ եր ականջ դնում, իսկ յերբ կարդում եյին, չնայած վոր նրանց կողմն եր նաչում ու ցույց տալիս թե լսում ե, բայց միտքը միանգամայն ուրիշ բաներով զբաղեցնում: Զգվում եր նա այդ կարգալուց:

Յերեկոյան նրանք Արտոյին կոմյերիտիություն ու բանվորական ակումբն ելին տանում: Ծանոթացնում ակումբների աշխատանքների հետ: Միասին նստում խմբակային պարապմունքներին, բացատրում Արտոյին պարապմունքների մասին:

Բայց Արտոն մտքում հայնոյում եր նրանց, վոր իրեն ազատ չեն թողնում, վոր կաշկանդել են իրա ազատությունը:

— «Ես ինչ ա ախպեր, յեսիր հո չենք» — մտմտում եր նա հաճախ մտքում:

Մի քանի որ հետո Գարիկն ու Վարդանն առաջարկեցին նրան հաճախել լիկկայանի պարտաժուկներին:

Այս արդեն բոլորովին Աշտուրի գուր չեկավ: Նա վրդովված ու արհամարհոտ ծամածռությամբ գեպի նրանք շուռ յեկավ ու սկսեց —

— Ձեզ ինչ ախպեր, գուր իմ գլխիս տերն եք, բոլ ա սրպանեցիք... Թող արեք ինձ, յես ձեր յեսիրը չեմ: Բոլ ա պոչիցս ման գաք, չեմ ուզում ախպե՛ր...:

Նրանք յերկար համոզեցին, բայց ոգուտ չունեցավ: Արտոն կտրականապես հրաժարվեց նրանց հետ ման գալուց և հանգոտություն առավ Կարապետ աղի խանութում:

Գարիկն ու Վարդանը ախրեցին ու հաղթվածի պես բջիջի քարտուղարի մոտ գնացին պատմելու ամբողջ յեղելությունը:

9.

Գարնան ծիլ ու ծաղկի, ծիծեռնակի ու արտուտի հետ գյուղ մտավ առաջին տրակտորը:

Հսկայական գոմշի նման փնջալով ու ծանրաշարժ նա որորվեց նեղլիկ փողոցներով և կանգ առավ գյուղի հրապարակում:

Ինչպես «մարալ» գոմշին կամ «ջեյրան» յեզանը «խամից հանելիս», տերը դռան շեմքում ձու յե խփում նրա ճակատին, կամ վզից կախում «թալիսմալի» կապույտ յեռանկյունին, այնպես ել նոր ու յերկաթի գոմշի տերերը դարդարել էյին նրա կուրծքն ու ճակատը՝ իրանց «թալիսմա»-ներով: Կարմիր ժապավեններ ելին կապել նրա կրծքին և առջևից ցցել հաղթական կարմիր դրոշակը:

— Տրախտորի մաշին...

— Տրախտորի մաշինն եկավ...

— Ուռա՛, ուռա՛, տրախտորի մաշինն եկավ...

«Տրախտորի մաշինը» շարժվեց գյուղի հրա-

պարակից ու հասարակութեան լաշն ողակով շրջ-
ջապատված դուրս չեկավ բաց դաշտը, առաջի-
նը՝ քաղաքացիական կռիւում ընկած Ալեքի այ-
րու՝ Հեղնարի արտը վարելու:

Կոմյերիտականների քեֆին քեֆ չեր հաս-
նում:

Գարնանը հանդ դուրս չեկող մարուկներինը-
ման նրանք ուրախ թուշկոտում էին տրակտորի
շուրջը:

Ապա իրար մոտ գալիս, թե-թեի գցում, և
զվարթ կերպով սկսում յերգել —

Գնաս բարով, չգաս տարով,

Պարոն Խաթիսով,

Ես աշխարհը մերն ա հիմա,

Մերն ել կը ֆնա:

Հանգում միտինդ յեղավ:

Վարկային ընկերութեան նախագահը բացա-
տրեց գլուղի չքավորներին հասցրած իրենց ա-
ռաջին ոգնութեան ժառին: Ապա կանդ առավ
վարկային ընկերութեան, արտերների և կոոպե-
րացիայի դերի և նշանակութեան վրա:

Բոլորն ել վողջունեցին «տրախտորի մաշի-
նի» մուտքը —

Գլուղխորհրդի նախագահը,

Կոմյերիտութեան բջիջի քարտուղարը,
Բատրակկովը,

Ուսուցիչը,

Կին պատգամավորուհին:

Յեւ յերբ «Փ ո Ր Ճ ո Ն Ը» շափ-շափելով առա-
ջին ակոսաշար ժապավենը գցեց գորշ հողի յե-
րեսին, — ջահելները բարձրաձայն «ուռու» կան-
չեցին, հասակավորներն ուրախութիւնից հըռ-
հռալ սկսեցին, կանայք խաչ հանեցին յերեսնե-
րին և յերկու կաթիլ արցունք հանդարտորեն
վար իջավ Արո ապու ալտերին:

Գարսեան աղեն հանդ դուրս չեկավ այդ որ:

Չարչի Չալոյի դուքանի առաջ նստած, նը-
րանք յերկար զրուցում էին:

— Չտես շան վորդիներ, մի երկաթի կտոր
են տեսել ու վոնց են վրա տվել... «ուռու»,
հա՛ «ուռու», զահլաներս տարան ելի...

— Եհ, ինչ ես սրտիդ նեղութիւն տալիս,
Գարսեան աղա, եդ մաշինը դրանց բան անողը
չի, մի անձրե վրա տվեց թե չե, տեսար ժան-
գոտվեց ու խաբաքա դառավ...

— Յես եդ վաղուց գիտամ ջանքւմ, համա ես
շան վորդքանց լոպազութիւնը չի քսշվում:

— Հոմբերի հլա, Գարսեան աղա, համ-
բերի... Աստու արքայութիւնը համբերողին ա...

* *
*

եղ Գարնանը, Գարսեան աղեն վարեց Արո
ապու արտը:

Վարեց, բայց ցանել չկարողացավ:

«Բոլոր կարտերը բացվեցին»...

Գյուղխորհուրդը քանդեց ապուրինի կերպով
կապած պայամանը և արտը հանձնեց իր խկա-
կան տիրոջը:

Փոկը նրան սերմացու տվեց և կոմիտերիտ-
միութեան բջիջը միաձայն վորոշեց, Գարսեան
աղի «Չգրու», շաբաթօրյակների միջոցով ցա-
նել, քաղել ու կալսել վտրած արտը:

Այս անգամ Գարսեան աղեն չեկավ Արո ա-
պու տունը:

— Լավ ոյին բերիք գլխիս, Արո ապեր...
Հողդ վարել տվիր ու արխային տանդ վեր ըն-
կար... Մի գյուղխորհուրդ ելա չես գնում, գոր-
ծի յետևից ընկնես, ինձ թողել ես մեջտեղ ու
դրադ քաշվել: Կարող ես արխային ես, վոր եղ
լուպազ լակոսները արագ պտի բեջարեն: Հա-
հո՞ղս նրանց գլխին... Մեկն ել դրանցից քո հա-
րազատ տղեն եր, ելի՛, տեհանք... Լավ կը բե-
ջարեն, մաշալլահ... բեջարելուն խոսք չկա...:

— Յես ինչ անեմ, Գարսեան աղա, յես հը

են վախտը քեզ ասի թե պայման կապենք, բա-
նը զակոնով բռնենք, համա դու քո ասածն ա-
րիր, հմի վոր զակոնը թող չի անում, յես ինչ
կարամ անեմ...:

— Հմի զակոնով ես խոսում հմ... Հմի ձենդ
տաք տեղիցն ա գալիս: Սերմացու յեն տվել
հարիֆին, ընդուր զակոնը միտն ա ընկել: Բա են
վախտը խի չիր զակոնի փեշիցը բռնում, վոր
չեկել վոտներս ելիր ընկել թե—«աղա ջան, քու-
լաշս կրող չկա, ծեծող չկա»:

— Գարսեան աղա, են վախտ ճար ու ճա-
նապարհ չի իմանում, տեր ու տիրական չու-
նեյի, համա հմի...:

— Հմի տիրականներդ շատացել են հմ...
են խնքոտներն ել տեր են կաղնել... Հլա մի
թող իրանց տանը բոմագ ընեն, յետո քեզ տե-
րութուն անեն: Դու չեկ են խելքին ես, վոր նը-
բանք պտի քեզ ոգնեն... Դրուստ ա ասած թե
վոր խելք ունենայիր, ել խի՞ աղքատ կլնեիր:
Թամամ դրուստ ա...:

Ապա ինքն իրան քննադատելով.—

— Ասա, ա՛յ Գարսեան, ել մարդ չկար, վոր
եկար ես ցնդած հալիվորի հետ գործ բռնեցիր,
եսքան տարի աղքատից ով ա խեր տեհել, վոր
դու տենաս...:

— Զակոնը չի թող անուժ, աղա՛ ջան, դակոնը—սորից կրկնել սկսեց իր խոսքերն Արսապին։

— Զակոնը չի՞ թող անուժ, հա՛, ձենդ կարի մունդոնիկ շան վորդի, վոր դու ուզենաս, գլուխ ցավացնես, զակոնը շատ լավ թող կունի, համա դու քո եշ խելքով ուրիշ բաներ ես մտածում... Բոփակ հալիվոր...:

Գարսեան աղեն ելի տաքացավ, բորբոքվեց, ապա թջելով ապու շեմքին, դուռը պինդ վրա խփեց ու հեռացավ։

10.

Վարպետը՝ վարպետ ե, բայց բոլոր վարպետներն ել միատեսակ չեն լինում։ Նրանք կարող են հասարականորեն անհրաժեշտ բանվորական վերոշ ժամանակվա ընթացքում, միատեսակ գործիքներով, միևնույն քանակությամբ արտադրել, բայց բնավորությամբ, վարվելակերպով, նրանք բոլորովին միատեսակ լինել չեն կարող։

Որինակ վարպետ Նիկողոսն ու վարպետ Ղեվոնդը։ Ի՞նչ նմանութունն սրանց մեջ։

Առաջինը չերկաթի նման մարդ ե, կտրուկ բնավորությամբ։ Մի թերութուն կամ հանցանք ունեցար թե չե, իսկույն չերեսովդ ե խփելու, ինչպես խաբազան։ Մի անգամ պոչավոր ալնոցների տակից յերեսիդ նաչեց, բավական ե, իսկույն կը հասկանա բնավորութունդ, կը ճանաչի քեզ։ «Մարդու զարգար եմ, մարդու զարգար, ձեռաց կը ճանաչեմ ինչ տիպ լինելը» — առում ե նա չերբեմն իրեն շրջապատողներին։

Այդ բնավորութիւն համար ել, նա կոմբլիշի սիրելին ե դարձել և բանվորներից շատերի խոր ակնածանքի օտարկան: Սանթրոսյանը նրանից ե մեկ-մեկ խորհուրդներ հարցնում, իսկ կոմյերիտականները «պապաշա» չեն կանչում նրան:

Մի որ նա Արտոյին դառնալով—

— Այ, երեսիդ եմ ասում, անգալ ես, յիս անգալներին չեմ սիրում. Սեյդդ գլխիդ հավաքի, բան սովորի, թե չե յես ժամանակ չունեմ հաստադուլաների բեյինում բան քամելու: Ես քան վախա ա, ինչ եստեղ ես, հեչ բան չեա ֆան-մում, բա դու յե՞րբ պտի բան սովորես:

Ինչքան ել բանվորները սիրեն վարպետին, ինչքան ել Սանթրոսյանը նրանից խորհուրդներ հարցնի և ինչքան ել կոմյերիտականները նրան «պապաշա» կանչեն, բայց և այնպես նա Արտոյի դուրը չի գալիս:

Արտոյի աչքում նա վոնց վոր մի հրեշ լինի վորը պատրաստ ե կտոր-կտոր անելու իրեն:

Նա այնպես ե նայում վարպետին, վոնց վոր խերիմ մի թշնամու:

Բայց բոլորովին ալլ ե վարպետ Դեմոգր:

Յերբ գնահատու կոնֆլիկտային հանձնաժողովում զրված եր Արմենակ Սարինյանի կատե-

գորիան բարձրացնելու հարցը, նա ձախ խնդրեց և սկսեց. —

— Եզ ընկերը հեչ բանի պետք չի ախպեր, ինչ անում ես բեյինը բան չի մանի, գոր ուրի-նակ, ասում ես վալյոկը լվա, նա վինգն ա հու-լորում, կամ թե ասում ես բենգին բեր, նա գնում պահեստապետի հետ գլալա ջի յե բրոն-վում: Զորորինակ նրա կշտին աշխատող Հայրա-պետը, ափսոս չի, նրան իրեք կատեգորի յե վոր ավել տաք կորած չի: Հալա թողեք դրա կատիգորեն քնա հինը: Զորորինակ յեթե նա մի երկու աժսից հետո խասյաթը փոխեց, սրտով կպավ գործին, են վախտը մի կատեգորի կա-վելացնենք: Թե չե, գորորինակ յեթե նրա կա-տիգորեն ավելացնենք, են լավ աշխատողի ձեռ-րն ել կը թուլանա...:

Մյուս որն, յերբ Արմենակ Սարինյանը վոր-պես իր ավագ վարպետի, նրան գիմեց, կատե-գորիայի մասին յեղած վորոշումն իմանալու հա-մար, նա սկսեց—

— Բաղդ չունես ողուլ, ենքան խոսացի, ճար չեղավ, չավելացրին: Յես ել գիտեմ, գորու-րինակ յեթե Հայրապետը 7 ստանա, դու խի պի-տի չատանա: Զորորինակ դու յել են գործն ես անում, ինչ նա յա անում: Սանթրոսյանը չի ու-

դում, Սանթրոսյանը: Դժվարությունն ել զրա մեջն ա, թե չե զորորինակ յես ինչքան ել ուզե-
նամ, յեթե Սանթրոսյանի սրտովը չեղավ՝ բան
չի դառնա:

Արտոն ել վարպետ Ղևոնդին եր սիրում: Նա
ինչքան եր չերանի տալիս, վոր վարպետ Նիկո-
ղոսի փոխարեն, վարպետ Ղևոնդը լինի իրենց
բաժանվունքի ավագը:

*
*
*

Ինչքան ել վարպետ Նիկողոսն «անխղճորեն»
դադի, ինչքան ել «հոգեառ» լինի Արտոյի հա-
մար, բայց և այնպես նա ունի կարեկիցներ ու
ցավակցողներն իր վշտերին:

Մի փոքրիկ շրջան ե աչդ:

Իրար մոտ, իրար ձուլված, իրար ցավերով
ապրող:

Մեկը՝ Կարոն ե:

Կարոն անկուսակցական ե:

Քանի անգամ ե նա փորձել կոմյունիստիս-
թյան մեջ մտնել, բայց չի հաջողվել:

Քարաուղարից վերցրել ե անկետաները: Լրաց-
րել, ձոխացրած կերպով, «հեղափոխական ան-
ցյալի» վորոշ շ. դախով, պրեկ կենսագրությու-
նը, կցել ղեմումին. ղեմում տալու բոպելին
ինչ վոր մտքեր բռնել են նրա ձեռքը. —

«Յանի ուլ ա իմանում, ես իշխանությունը
հաստատ մնալու չա թե վոչ: Կարող ա փոխվեց:
Լավ, վոր կոմսոմոլիստ չլինեմ, ի՞նչ կը կորց-
նեմ... խառնակ տարի յե ախպե՛ր, ի՞նչ գործ
ունեմ առանց ցավալ զլուխս ավետարանի տակ
դնել...»

Մտածում եր Կարոն, հարցնում մի քանի
անկուսակցականների կարծիքը և վորոշում հա-
նում—«քիչ ել սպասենք, տեսանք ինչ դուրս կը
գա...» և դիմումն ու կենսագրությունը պա-
հում թղթերի մեջ մի որից չե մի որ, ոգտա-
գործելու համար:

Մի անգամ ել նա բոլոր ձևականություննե-
րը կատարել և պատրաստվում եր դիմումը քար-
տուղարին հանձնել, չերբ իմացավ ինչ վոր ձեղ-
նորսության հողի վրա կոնֆլիկտ ե առաջացել
Անդրեայի և ԽՍՀՄ միջև, վորը հղի յեր մինչև
խսկ պատերազմի վտանգով:

— «Ինչ դիմում տալու վախտ ե յեղբա՛յր,
— մտածեց և դիմումը նորից տուն վերադարձ-
րեց:

Յերեկոյան յերկար միտք արեց նա, ապա
վերջնականապես կայուն վորոշում հանելով,
պատռեց ղեմումը և վորոշեց — «վոչ սրանց խե-
րին խառնվել, վոչ ել շառին»:

Մի տարի անցել էր արդեն:

Գործարանում համառ կերպով պատվում էր աչն լուրը, թե խնայողության ռեժիմը կրճատումներ է պահանջում, թե Սանթրոսյանն արդեն կրճատման ցուցակ է կազմում:

Կարոն հապճեպով կոմյերիստիսթյան բջիջի քարտուղարին դիմեց—

— Ընկեր Գրիգոր, խնդրում եմ ինձ անկետաներ տվեք...:

Արատի յերկրորդ ընկերը կոմյերիստական Արամն էր:

«Յերիտասարդ Դոն-ժուան» ելին ասում նրան բանվորներն ու կոմյերիստականները:

— Պահ, ես ինչ լավ աղջիկ ես—սիրում եր բացականչել նա, փողոցում, իգական սեռին պատկանող ամեն մի անցորդի յետևից:

— Ախպեր, ինչ բանվոր դասակարգ, ամենալավ դասակարգը՝ աղջիկների դասակարգն ա, դրանց հոգուն մատաղ: Սոցիալիզմն էլ, կոմունիզմն էլ՝ դրանք են: Առանց դրանց կյանքն ինչ ա վոր...— ասում էր Արամը.— Զուր չի վոր մի յերգում ասված է—

«Հայոց աղջիկներ լե՛, լե՛, լե՛, լե՛,

Ինչ անուն տում ձե՛զ:

Հրեշտակ չեմ տեսել անուշ ջան,

Վոր հրեշտակ ասե՛մ...»

Գործարանում աշխատանքը վերջանալուց անմիջապես հետո, Արամը տուն էր վազում, հանում աշխատանքային մրոտ ու մաշված շորերը, մաքուր վերնաշապկի վրայից կապում ոճիքն ու փողկապը, լավ արթունկած շալվարից հետո, հագնում փայլուն կոշիկները, մի բանի արծաթյա մոնոգրամն երով զարդարված ձեռնափայտը վերցնում և սվավացնելով դուրս գալիս զբոսնելու:

Քաղաքոցի հետ Արամը բոլորովին մտերմութուն չունի: Ասում է նույնիսկ այդ դրպրոցը:

— «Յես բանվոր մարդ եմ, իմ ինչ գործն ա, թե Մարքսը վոր թվին ա ծնվել, կամ Լենինը վոր քաղաքներն ա ման չեկել: Եդ բոլորը թող ինտելիգենտները սովորեն, վոր կարողանան կոմսոմոլի, կամ կուսակցության մեջ մտնել...: Մի թող կռիվ լինի, տեսնենք յես լավ կը կռվեմ, թե եդ Մարքսն ու Լենինը վոտանավոր անողները...»— ախպես էր մտածում և հուսադրում իրեն Արամը:

Իսկ յերբ գիտցիպլինայի կարգով նրան ստիպում էին քաղաքոց գնալ, նա չնայած ֆիզիքապես նստում էր դասարանում, բայց մաքով

Թափառում եր թատրոնները, կինոները, աղջիկները, յետևից ման գալիս, կամ թե հաջադրով խուզարկում դասարանում նստած կոմյերիտականների աչքերը, դեմքը, կիսարաց թևերն ու կուրծքը:

Նաբոգնիկական շարժումն ուսումնասիրում եր Արուսի դեմքի վրա, կամ թե «Искра»-ի հիմնադրման հարցի պատասխանը վորոնում Լեւայի աչքերում:

Քաղաքապետների ժամը՝ միակ ժամն եր, յերբ Արամը կենտրոնանում ու մտածում եր սիրո և զվարճալիքների մասին:

— «Կոմյերիտական սերը վորն ա, ախպեր, սերը՝ սեր ա...: Լավ աղջիկ ա, բռնի՛ր, գրկի՛ր ու համբուրի՛ր և յեթե կհամաձայնվի, ավելի հեռուներն ել գնա... Սրա կոմյերիտականը վորն ա, չեմ հասկանում» — մտածում եր նա:

Մի անգամ, այդ մտածվածքների քաղցր ժամին, խմբակավարը նրան դառնալով —

— Հապա, ընկեր Արամ, տասցեք թե վոր թվին հիմնվեց «Աշխատանքի ազատագրման խմբակը»:

— Յես բանվոր եմ, ընկեր Վարյա՛ն, այդ պիտի հարցերը գնացեք համալսարանի սանիերին տվեք:

— Ձե՛ վոր այդ մասին մենք անցանք այստեղ:

— Նշանակում ե եդ դասին յես այստեղ չեմ յեղել:

— Այսոր, հենց այսոր անցանք...:

— Ընկեր Վարյա՛ն, այսոր գլուխս սաստիկ ցավում ե և տրամադրությունս սաստիկ վատ ե. ամբողջ գիշերը չեմ քնել, սաստիկ տաքացրել եմ...:

— «Սայտառակվեցի» — մտածեց Արամը, յերբ ամբողջ դասարանը հանդիմանական և հարցական հաջադրով նրան եր նայում: — «Հմի Արուսն ու Լենան ըստեղ չլինեյին, ելի վոչինչ...: Լավ, ինչու պիտի խոյտառակվեմ յանի, յես բանվոր եմ, բանվորը հո պարտական չի ամեն բան իմանալու... — Հուսադրում եր իրեն Արամը — «մի թող կռիվ լինի, տեսնենք յես լավ կը կռվեմ թե եդ հարցին պատասխան տվողը»...:

Յերրորդը՝ Սիրակն ե, նույնպես անկուսակցական:

«Ես իշխանությունը լավ իշխանություն ա, համա վոր ելի բարձր ու ցածրը կա, եդ ա խառաբ անում: Թե հավասարություն ա, թող հավասարություն լինի: Թող բերեն ոռճիկներն ել հավասարեցնեն, վոր ասենք իսկապես բանվոր»:

րական իշխանությունն ա...» — Այս եր Սիրակի
«հավատո հանգանակը»:

Այս չորսը միջուկն են, իսկ սրանց ավելի
մոտիկ կանգաժ են Արսենը («Բաղետեր Արսեն») և
Սեդրակը («Խոզատեր Սեդրակ»):

Վարպետ Ղևոնդն ել՝ և՛ սրանց ասածներին
եր համաձայն, և՛ մյուսներին, և՛ բոլորին:

«Դժգոհներին և ծուլներին չեղբայրա-
կան ընկերություն» — այսպես եր բնորոշել
բանվոր Մինասը և այդպես ել կոչում ելին նը-
րանց վողջ գործարանում:

Կուս. անդամ Գեղամը չնայած ֆիզիքապես
այնքան ել չեր սիրում թե այդ քառյակին և թե
նրանց շուրջը համախմբված բանվորներին, բայց
հաճախ նրանց տրամադրութուններն ոգտադոր-
ծում եր այլ նպատակներին համար:

Գեղամը բջիջի ակտիվ անդամներից եր, 1923
թվին ստաժով: Մի շարք խնդիրների շուրջ նա
չեր բաժանում բջիջի կարծիքը: Նա այն միտքն
եր պաշտպանում, վոր մի յերկրում սոցիալիզմ
կառուցելն անհնարին բան ե — «Ովը վոր կասի
թե առանցը համաշխարհայինը չեղափոխությանը
մեր յերկրումը սոցիալիզմը կը կառուցվի, դուքը
չը հավատաք»: «Մեկը ել մերը յերկրի Քյա-
վառի հշերովը սոցիալիզմը կը կառուցենքը»:

«Մի տունը ենք շինումը ու ասում ենքը թե
սոցիալիզմ ենքը կառուցումը, ակազեր»: — Սրանք
Գեղամի մշտական խոսքերն ելին, վոր նա կրկ-
նում եր համարյա բոլոր կուսակցական ժողով-
ներում:

Գեղամը սխալ եր համարում նաև թե կու-
սակցության և թե խորհ. իշխանության ղեկա-
վարման մեթոդները և այդ ապացուցելու համար
հենվում եր դժգոհ տարրերի տրամադրութուն-
ների վրա:

Արտոն ու իր ընկերներն ել այստեղ ելին
պեսք գալիս նրան:

Չնայած բոլոր ժողովներում Գեղամը դեմ եր
տրտահախավում և պաշտպանում իր «ուրուխ» տե-
սակետները, բայց քվեյտրեկութունների ժամա-
նակ՝ ձեռքը զրպանից շատ քիչ ժամանակ եր
դուրս հանում: Վոչ կողմ եր քվեյարկում, վոչ
դեմ, վոչ ել ձեռնապահ:

Յերբ բջիջի դռնփակ նիստում Գեղամը հո-
րից դուրս լեկավ պաշտպանելու իր տեսակետը,
վարպետ Նիկողոսը ձայն խնդրեց ու սկսեց.

— «Այ բալամ, ցոցիալիզմի կառուցելը վոչ
թամբախների գործն ա, վոչ ել գլավազաների:
Դու սկի ոխկ չես անում մի հարցի քվեյարկու-
թյունին մասնակցես, վորը դիմն պտի ոխկ ա-

նես ցոցիալիզմի կառուցմանը ժամանակցես ու հավատաս: Մենք ցոցիալիզմի կառուցման ճամփեն պոնել ու գնում ենք և հաստատ հավատում ենք վոր տեխ կհասնենք: Յեվ մեկ էլ գիտենք, վոր ճանփի կեսին մնալու յեն թե Գլավառի իշվտանք և թե ցոցիալիզմի կառուցման չհավատացողները»:

Բոլորը զարմացած վարպետ Նիկոլոսի հաջող ճառից յերկարատև ծափահարության արժանացրին նրան:

Այդ ճառից և ծափահարություններից վողեվորված դուրս յեկավ բանֆակի ուսանող բանվոր Աբրահամը:

— Ընկերներ— առանձին վողեւորությամբ ըսկսեց նա— թե ընկեր Գեղամը հուլյսա դրել Քյավառի եղերի վրա, վոր մի յերկրումը սոցիալիզմ չի կառուցվի, ապա մենք ել մեր բազուկների ուժի և ամբողջ աշխարհի պրոլետարիատի ոգնության վրա յենք հուլյս դրել և հավատացած ենք, վոր սոցիալիզմը պիտի կառուցենք: Տեսնենք ում հուլյսերը կարդարանան:

Կրկին ջերմ ու համեղաշխ ծափեր:

Չնայած բոլոր ժողովներին ել, իրանց, բանվորների բերանով ասած— «լացացնում» էյին Գեղամին,— բայց նա համառ կերպով պաշտպանում եր իր տեսակետները, միշտ ել միևնույն փաստերով ու որինակներով:

— Յալլա՛, յալլա՛, յալլա՛նա՛ն...

— Հա՛, հա՛, հա՛, հա՛ն...

— Հա դուրբա՛ն, հա դուրբա՛, հա՛, հա՛ն...

— Վոժ տուր, վոժ տուր, մեքիչմ էս յանը...

— Յալլա՛, հա՛, յալլա՛, հա՛ն...

— Ես յանը տալ տուր, էս յանը տալ տուր... տո յես քեզ չասի... տո ծնողա... էս յանը տալ տուր է... դժար ա հա՛, բա գիղըմիլը թե խուրմա յեր...

— Հա՛ ջան, հա դուրբան...

— Յալլա՛, հա՛, յալլա՛, հա՛ն...

Ամբողջ գործարանը մըջնալին աշխուժությամբ թափել է բախում կանգնած բեռնատար ավտոմեքենաների շուրջը և իջեցնում ստացված մեքենաները:

Սա յեւ յուրատեսակ խնճուղք է: Բոլորն ուրախ են, ծիծաղկոտ: Աշխուժ:

Իսկ Սամբրոսյանը: Ո՛ր, նրա բեֆին բեֆ չի

հասնում: Մի տարուց ավել եր ինչ հա ամեն տեղ պարծանքով խոսում եր — «սպասեր, հլա մի Գերմանից մաշինեքս բերել տալ-տամ, հալստը կիմանաք»: Ու հիմա նրա ալդ անձկալի չերազանքն եր, վոր կյանք եր դարձել: Կապույտ խալթը հագած, նա գնդակի նման գլորվում եր ավտոների շուրջը: Սմբողջ ուժով հրում մեքենայի իջնող մասերի չետեից: Ու ամենապատասխանատու ռազմաճակատը ղեկավարող հրամանատարի նման անում խիստ և սպառնական հրամաններ:

Բոլորն ել աշխատում էին: Սկսած Սանթրոսյանից մինչև վարպետ Նիկողոսը և վարպետ Մինասից մինչև Արտոն:

— «Համա դրժար ա հա — մտածում եր Արտոն ծանր բեռի տակ — լանի ես ինչ մեր գործն ա, չեմ հասկանում»:

— Յալլա, հա, յալլա, հա...

— Հա դուրբան, հա դուրբան, հա, հա...

— Վոժ տուր, վոժ տուր, եսոր ուժինը Սանթրոսյանի վրին ա...

— Հա ջան, հա ջան, յալլա, յալլա...

Բոլորի ճակատից ել թրջված ապակու նման կախվել էին քրտինքի կաթիլները:

Բոլորն ել շարժարվում էին, բայց ուրախ:

Ինդուստրիայի գիժավորումն եր ալդ:

*
* *

Մուսյլ եր գերմանացի մասնագետը: Իր բերած մեքենաների նման ծանր ու մուգ:

Ո՛վ կը համարձակվեր ծիծաղել նրա առաջ, կամ բարձրաձայն խոսել:

Մեքենաները սաքքի պեղ, բանվորական խնճուղքում բոլորը խմեցին նրա կենացը և մյուս սրվանից սկսեց բանեցնել բոլորովին նոր ձևի մեքենաները:

Սանթրոսյանը կարլ Հերմանի «վեշն» ել «բաշեց» իր առանձնասենյակում, մտերմաբեր, ազավազված ուտերենով, նրան հուշակես մի քանի հայհոյանքներ բաշխեց, ապա ձեռքը սեղմելով գուրս չեկավ և նրա հետ միասին գնացին գործարանը:

Նա արդեն ընդունակ չերիտասարդ բանվորներից շոկել եր մի լոթ հոգու նոր մեքենաների վրա սովորելու և տանում իր գերմանացի մասնագետին նրան հանձնելու համար:

— Вот хорошей ученики. Они комсомолы. Знает што таки комсомол...

— Знай, знай...

— Ну хорошей учит их... а то больше ни пиом за твой здоров... հա...

— Знай, знай...

— Вот возьми и учит их... Хорошой учит их...հա...

— Карош, карош...

Ապա խոսքն ուղղելով չերիտասարդ բանվորներին. —

— Թե մարդ ա, թե լամպի շուշա չա, ես ա, ձեր մենձավորն ա, լավ գլուխներդ կախեք, կա-
կուղ դամարից բռնացրեք, փեշակը դավթեք: Սա
նեմեց ա սա մեր չերկրի մարդկերանցիցը չի,
հայ հայ չանեք խրոնոսյանեք... Թե չե վոր մի
մազաչափ նեղացնիլ տալ-տաք ձեզ դիփիդ ել
ես ադ ելիցը հանիլ տալ-տալ կտամ...

— Շատ լավ, շատ լավ...

— Լավը լավ, համա խելքը գլխներիդ ժող-
վեք հա, ելի յեմ ասում հա, սրտին չկաչեք հա...

Հետո կրկին դառնալով մասնագետ գերմա-
նացուն ամուր կերպով սեղմեց նրա ձեռքը և —

— Ну Ерманд Զան, я пашол, ты хорошей пасматри на машины и на дела...и учит это маладеж...

— Карош, карош...

— Ну дасвидан, Ерманд Զան:

— Знай, знай...

*
* *

Նոր մեքենաները խոշոր չափով բարձրացնում
էին արտադրողականութունը և իջեցնում գը-
ները:

Նրանցից յուրաքանչյուրը մի բանվորական
որվա բնթացքում կատարում եր չորս բանվորի
դործ: Իսկ չիթե չերեք հերթով, անընդհատ աշ-
խատեցնելին, յուրաքանչյուրը նրանցից կարտա-
դրեր 12 բանվորական միավորի չափ:

Դրա համար եր Սանթրոսյանն աչքան ու-
րախ:

Դրա համար եր Սանթրոսյանն ամեն տեղ
նոր մեքենաների գովքն անում և ամեն որ նո-
րանոր այցելուներ բերում գործարանը և բա-
ցատրում աչք հազվագույշ մեքենաների գաղտ-
նիքը:

*
* *

Մուսլ եր գերմանացի մասնագետը: Ծանր ու
մուսլ:

Յերբեք չեր ծիծաղում:

Աշխատում եր ինչպես ժամացույցը: Վոչ մի
ավելորդ շարժում, մոչ մի տվերորդ խոսակցու-
թյուն:

Յերիտասարդ բանվորներն ել աշխատում

եյին նրա ժամացույցային տակտով, առանց խոսակցության, առանց կատակելու: Նրանք վաղ թե վաղից եյին այդ անում, այլ պատկառում եյին այդ մոռյալ մարդուց:

Ինչպես ծիծաղել կա՞ւ կատակել, չերբ այդ մարդն ամբողջ ուժով ու ուշադրությամբ կենտրոնացած իր գործին լուռ կերպով աշխատում եր:

Ծիծաղել կամ խոսել—դա հավասար եր այն բանին, չերբ մեկը չերգեր պատասխանատու և կարեւոր ժողովում, կամ պարեր մահվան հանդիսում: Իսկ սի կը համարձակվեր այդ անել:

Կարլ Հերմանը Սանթրոսյանի պես սրտացավ եր զեպի գործն ու մեքենաները: Նա ուշադրությամբ հետևում եր աշակերտների աշխատանքներին, ժամերով կուսցած մեքենաների մոտ, ձեռքի և դեմքի շարժումներով նրանց բացատրում և սովորեցնում եր նոր մեքենաների գաղտնիքները:

Իսկ նրանք ունկնդրում եյին այդ մոռյալ մարդուն հմայվածի նման:

Յերկու շաբաթ եր անցել, բայց ամբողջ գործարանում խոսում եյին «նեմեյի» բերած գիտելիքների մասին: Վարպետները զարմացել եյին վոր այն «շուշուկի» ու «գլավադա» աղերան-

ցից այդպիսի լուսնայ գործի մարդիկ եյին դուրս չեկել:

— Հալալ ա նեմեյին ախպեր, գործը լավ գրեց:

— Բա իսի չեն ասել նեմեյ... — խոսում եյին վարպետները:

— Հինգ հերուրդի հաչրենակիցը մեր գործարանի գիտելիքնալի գլխին մի նոր Հինգհերուրդ դարձավ:

— Այն Հինգհերուրդի դեմ մենք կը կովենք իսկ սրան պետք ե վողջունել—գրուցում եյին կոմիտեի տակահանները:

Իսկ Սանթրոսյանը չափազանց դոհ եր Հերմանից: Գործարանի ամեն մի բաժանմունքում նրա գովքն եր անում: Վորպես որինակ նրան հանձնարարում եր բոլոր վարպետներին —

— Այ Յերգմանի պես չեղեք, Յերգմանի պես, ձեր աղեղներում գիտելիքնը շատ բնվորոշ ա, պետք ա վերացնել տալ տաք, պետք ա կարգ ու կանոն դնիլ տալ-տաք:

Ապա այցելում եր Կարլ Հերմանին:

— Ну Ерманд ջան, дела как?

— Карош, карош.

— Ерманд ջան, я очень частлив, што ти

у мне работает. Ти хорошей дисциплины поставит. Маладец Ерманд Զան маладец.

— Знай, знай.

— Патом ти хорошей пасматри што ани учит.

— Знай знай.

Ու Սանթրոպանը «նեմեցի աղելիցը» հեռանում եր ամբողջ հոգով փառավորված:

*
* *

Բաժանմունքի լերիտասարդ բանվորները շատ դո՛հ ելին Հերմանից: Նրանք մեծ ուշադրությամբ լսում ու կատարում ելին նրա յուրաքանչյուր ցուցմունքը և ամեն որ տուն դնում՝ սինոր բան սովորած:

12.

Փոքրիկ բաժանմունքում, գործարանի ամենաբարդ միակ մեքենայի վրա, աշխատում են նրանք:

Վարպետ Մինասը 37 տարի չե լինչ բանում ե աչդ նույն տեղում, նույն մեքենայի կողքին:

Յեվ նրան այնքան ծանոթ են մեքենայի բոլոր մասերը, բոլոր մանրամասնությունները, վորքան իր հինգ մասները:

Նա բարձրահասակ ե: Ճաղատ գլխով, ճակատին խոր կնճիռներ, դեմքին ծալքեր ու խորշոփներ: Ձեռները մազոյներից կարծրացել, կոշտացել, ճեղքճեղքվել, բազմամյա կաղնու կեղևի նման:

Ինքն ել վիթխարի կաղնի լինի ասես, վորի յերկու կողքերից մատղաշ ծիլերի նման կանգնել են Գարիկն ու Վարդանը—նրա աչալուրջ յերկու ոգնականները:

Յեվ վիթխարի կաղնու նման պատկառելի չե

վարպետ Մինասը: Ամենքից սիրված, համակրելի:

Նույն գործարանում աշխատող պրակտիկոսը,
փոփոխված, պատի թերթում մի վտանավոր
զրեց վարպետ Մինասի մասին—

«Գործերդ լավ, խոսքերդ քաղցր, վարպետ,
Մեջքդ ամուր, հասակդ բարձր, վարպետ:

Բոյդ չերկար, կաղնու ծառ է, վարպետ,
Դու մեզ համար ղեկավար ես, վարպետ:

Լավ բանում ես, քրտնում ես վարպետ,
Շաբաթ որն ել, լավ գցում ես, վարպետ:

Մենք քեզնով ենք հպարտանում, վարպետ,
Դու մեր հայրն ու ուսուցիչը, վարպետ:

Գործերդ լավ, խոսքերդ քաղցր, վարպետ,
Մեջքդ ամուր, հասակդ բարձր, վարպետ:

Այսպես զրեց պրակտ գրողը: Կարգացին,
ուրախացան բոլորը և վարպետ Մինասի հասա-
կակիցներն սկսեցին կատակել—

— Այ տղա, Մինաս, վտանավոր ել դառար,
ել ի՞նչ ես մտածում:

— Ե՛հ, ջահելութուն ա, ահում են տղերքն,
ինչ ասեմ:

— Լավ ա, լավ ա, լավ եր գրած:

* * *

Դարիկն ու Վարդանն՝ չերկուքն ել կոմյերի-
տականներ ելին:

Առաջինը չորրորդ տարին եր ինչ գործարա-
նումն եր, իսկ չերկրորդը՝ նրանից չորս ամիս
հետո չեր չեկել:

Գործարան ընդունվեցին վորպես անչափա-
հասներ, վորպես «բռն» ինչպես կասեր Սան-
թրոսյանը և հիմա արդեն չենթավարպետներ են:

Կաղնու կողքերից բարձրացած ճյուղերի չեն
նման նրանք, հուսատու ճյուղեր, վորոնք կը
փոխարինեն, չերբ կաղնին ընկնի:

Արդեն սովորել են քանդել մեքենայի մա-
սերը, սարքել նորից և մասամբ ղեկավարել ա-
մենաբարդ մեքենան:

Ամբողջովին մրի ու յուղի մեջ նրանք հա-
ճախ մեքենայի վտտերի մոտով սողսկում են
ներս, մաքրում, փայլեցնում ամեն մի մասը,
փայփայտում մեքենան, ինչպես ամենամոտ ու
հարազատ մտերմի:

Վարպետ Մինասը հաճույքով եր դիտում:
Նրա սիրտն ուռչում եր, փոփոխվում, չերբ տես-
նում եր, վոր փոխարինողները նույնպես են վե-
րաբերվում մեքենային, ինչպես ինքը տառնյակ
տարիների ընթացքում:

Նրան թվում էր, Վոր ինքն է ջահելացել, հին վագերորութունն ու առաջդրութունն է յետ դարձել, չերբ փոխարինողները յեռանդուն ու նվարված աշխատանքն եր դիտում:

— Ապրեք աղերք, չարչարանքս զուր տեղ չանցավ: Հմի թե մեռնեմ ել, արխային կը մեռնեմ, վորովհետև գիտեմ, թե մաշինես չի կանգնելու:

Ամեն տեղ, վարպետ Մինասը գովեստով եր խոսում իր ոգնականների մասին:

— Ղոջախ աղերք են, հալալ լինի իրանց կաթը: Գեֆա բերում են ախպեր, չերանի չեր մեր բոլոր աշակերաններն ել եգպես լինեյին:

Սանթրոսյանը նույնպես մեծ բավականութամբ եր խոսում Վարդանի ու Գարիկի մասին և չերբ նրանցից առաջինը ցանկանում եր կուսակցութան մեջ մտնել, իր բլոկնոտի թղթի վրա նա այսպես գրեց.

«ՅԵՐԱՇԻԱՎՈՐՈՒՄ

Հընկեր—Վարդանը—մեզ—աշխատանքին լավ—մտիկ—անողներինցն ա: Խելքը—գլխին: Գործին—վահմող: Մաշինեքին—ու—հաջաթնեքին—լավ—թամաշ—անող: Համ ել—լավ—կոմսոմոլ ա: Իսկական—կոմսոմոլն—ել—ըտենց

սլախ ըլի: Ըղբա—համա ել—չես չերաշխավոր—եմ—նրան—ունթունել տալ—տանք—մեր կուսակցութան—միջին:

Յանկա լի—համարել—բջիջին հաստատել—տալ—տա:

Յերաշխավորում եմ

ՍԻՆՈՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Ստամբ — 1900 թ. № 242543»

Շատ քչերի համար եր Սանթրոսյանն այսպիսի գրութուններ գրում և դրա համար ել բջիջում չերբ կարգացին նրա չերաշխավորութունը շատերը բացականչեցին «դե վոր Սանթրոսյանն ա չերաշխավորել ել ինչ հարցնենք», «կարմիր չնդունենք»:

*
* *

Արդեն չերկրորդ ամիսն եր, ինչ վարպետ Մինասը հիվանդանոցում պառկել եր:

Յերկար տարիների աշխատանքը նրան հյուսիս, ուժասպառ արել ու վերջնականապես անկողին եր նետել:

Վարդանն ու Գարիկը շաբաթական չերկու անգամ նրա մոտ ելին գնում: Տանում անհրաժեշտ իրերն և ուտելիքները, նստում մանճակալի կողքին, զրուցում գործից, գործարանից ու

վարպետ Մինասի համար կանքը նորից քաղցրանալ, հրապուրիչ եր սկսում զսանալ:

Անցան ամիսներ:

Վարպետ Մինասը տնքաց չերկար, տանջվեց անկողնում, բայց ուժերն սպառվեցին ու մի առավոտ յերբ արեւը նոր եր ծագում նրա գարկերակն ընդժիշտ կանգ առավ:

Մեռավ վարպետ Մինասը:

Վարդանն ու Գարիկը թերթում հոգվածներ գրեցին անգուգալան վարպետի մասին, ամբողջ գործարանը հուզարկավորեց նրա դիակը և նորից մեքենաները նույն չափով բանել սկսեցին:

Արմատի մոտ բուսած ճյուղերը զորացան, աճեցին ու բռնեցին կաղնու տեղը:

Վարդանը գործարանի ամենաբարդ մեքենայի ղեկավարը դարձավ, իսկ Գարիկը՝ նրա ոգնականը:

*
*
*

— Յես քեզ հարիր հետ ասի, — սկսեց վարպետ Նիկողոսը, — վոր գործը թողած գյալաշի չեն անի, ես մի սհաթ ա ինչ պահեստի դռանը թրև ես գալիս, բոլ ա գլուխ պահես, հոգիներս հանեցիր...: Վե կալ, վե կալ են կլուչն ու վալ լոկների վտերը քանդի:

Հակառակ բազմիցս արած զգուշացումներին

Արտոն նորից, փոխանակ մի քիչ ուժ գործադրելու և պտուտակը վոլորելու, սկսեց կլուչով նրա գլխին խփել, վոր շուտ քանդվի:

— Յես քեզ քանի հետ ասի, վոր կլուչով չեն խփի վնտի գլխին, համա բեյինդ չի մանում: Թո՛ղ, թո՛ղ եստեղ, ա՛յ ըսենց, վնտի գլխից կը բռնացնես, կամաց կը հոլորես ու հեշտո թլամը դուրս կգա: Դե մի փորձի տենանք:

Արտոն մոտեցավ պտուտակին ու առանց թեվին ուժ տալու, կամացուկ սկսեց վոլորել, չեղավ...:

— Այ բալա, ախրը գործին ըսենց մոտ գալ չի լինի, ընչի յես ըսենց վախում, մի քիչ ուժ տուր թեկիդ տնաշենի տղա, ընենց ես գործին մոտ գալիս, վոր ասես գործը գազա՛ն ա, քեզ կուտի: Ջահել տղա յես, մի քիչ թեկերիդ ուժ տուր, յես քո վախտը ասլանի բերան ելի ճըղում: Այ եսպես, կլուչը պինդ բռնի ձեռումդ և ուժով հոլորի: Մեկել արա տենանք...:

Այս անգամ Արամը մեծ դժվարութլամը քանդեց պտուտակը և վալյով կը հանելով, մի ծալն ամուր խփեց ղեռներին:

— Այ սատիես դու, սարսաղի կտոր, հենց նոր չասի, վոր վալյովի ձեռից ղեռին չխփես ձեռը ափակում ա և ել վնտի մեջը չի մանի ..

Չե ախպեր, չե, քեզանից բան չի դուրս գա, գաաարկ տեղ գլուխ ենք ուռացնում...:

Չանցած կես ժամը Արամը բենդին բերե-
րելու պատրվակով դուրս գնաց ու գործարանի
բակում, մի քարի վրա պըպզած, չերկար զրույ-
ցի բռնվեց զիշտըստպահի հետ, վորը ցերեկներն
իր ազատ ժամանակը համարյա գործարանի
շուրջն եր անց կացնում:

*
* *

Աշխատանքի գործարքային ձևին անցնելը և
ուսցիտնալիզացիան Սանթրոսյանին հրամայողա-
բար սախպում ելին վերանայել շտամները և ա-
զատվել անգործունյա ու ծույլ տարրերից:

Ելեքտրական լամպի լույսի տակ, յերրորդ
ժամն ե արդեն, ինչ նա առանձնատեսչակում
նստած, բանվորների անվանացուցակն առաջին,
խորասուզվել ե նրա մեջ:

Թղթի յերեսին ասես զորատես լինի, բոլոր
բանվորները շարքով անցնում են նրա աչքերի
առաջից: Ահա նա բռնում ե մեկին, աչքերը կը-
կոցելով չերկար նայում, ստուգում, հաշվի առ-
նում նրա թերություններն ու առավելություն-
ները, ամսվա մեջ քանի՞ անգամ ե ուշացել, քա-
նի՞ որ բացակա չեղել: Նորից մտածում և բաց

թողնում նրան: Ահա չերկրորդը, չերրորդը, և
այսպես անվերջ:

Վերջապես նրա անունը — Միսասյան
Արտո:

Կանգ առավ, նորից կկոցեց աչքերը, չերկար
մտածեց — «...Կոմսոմոլ ա... ջհաննամ թե կոմ-
սոմոլ ա... հաստադլուխ ա, հաստադլուխ... բեյի-
նում բան չի մտնում... Աշի, անգյալ զադ ա,
ուսդ արա թող գնա...»:

Մի անգամ ել մտածեց և ապա ծուռումուռ
տառերով ցուցակում, նրա անվան դեմը դրեց —
«Կռճատր ել»:

Դեռ նա չերկար շարունակեց իր այդ հետա-
քըքիր աշխատանքը և յերբ ավարտեց, ցուցա-
կում արդեն մի քանի մարդկանց անունների դի-
մաց զրված եր հեղինակավոր վճիռ:

Առավոտյան գործարանում արտակարգ չե-
ռուզեռ եր:

Բոլորը հավաքված հայտարարությունների
տախտակի մոտ, կարդում եին որվա նորություն-
ներ, — կրճատվածների ցուցակը:

«Դժգոհներ ի և ծուլեր ի չեղբայրա-
կան ընկերությունը» պատվավոր տեղ եր
զրավել աջտեղ:

Պակասը լրացնում ելին Արսենը («բաղատեր Արսեն») և Սեդրակը («խոզատեր Սեդրակ»):

— Համա լավ են ջոկել հմ:

— Սանթրոսյանի մերը հմեռնի, ջոկին և լրտենց կրնին:

— Բա նա թաց աեղ քնող ա — խոսում ելին բանվորները:

13.

Նորից կարկտաբեր առաքելը կուտակվեցին Արտաշի գլխին:

Անգործությունը նորից իր գիրկն առավ նրան:

Նա նորից զոգգոջ քայլերով ներս եր մանում Գավկոմի շենքը, նախասենյակում հերթի սպասում, գլխարկը հանած բարևում ծուռ սեղանի մոտ նստած իր հին ծանոթին, ձեռքերը կողքին կպցրած, կանգնում նրա սեղանի մոտ ու անհամարձակ ձայնով կրմկում —

— Հընկեր քարտուղսր, բա վոնց կլինի մեր ճարը:

Պատասխանը ծանոթ եր:

Գավկոմից հետո նա պրոֆմիություն եր գլնում: Այնտեղ ել սովորաբար միշտ նույն պատասխանը:

— Գործ չկա:

Բաց մի որ, պրոֆմիության քարտուղարը, վոր նախկին բանվորներից եր, ուրախ կերպով

ղիմավորեց Արտուրին—հաղորդեց Վոր նրա հա-
մար գործ ե գտել:

— Ի՞նչ գործ ա,—հարցրեց Արտուն:

— Հասարակ բանվորի աշխատանք ե, կար-
բիղի զավոգում:

— Ձե, յես կարբիղի զավոգ չեմ գնում, են-
տեղ ասում են թունավոր զաղերով են աշխա-
տում: Մի սաղ ջան ունենք, են ել վրա տանք:

— Այ ջանս, ենտեղ վոչ մի թունավոր բան
չկա...

Ձե ախպեր չեմ ուզում, զոռով ա...

— Դու գիտես ենվախտ ուրիշին կուղարկենք:

— Յանի խի՞ իմ արհեստից կրճատեցիք, վոր
հմի յեկ կարպիտի զավոգ եք ուղարկում:

— Մե՞նք ենք կրճատել:

— Բա ո՞վ ա կրճատել:

— Յանի չգիտես ելի՞:

— Գիտեմ, համա վոր դուք ուղենալիք ինձ
չեցին կրճատի:

— Քո մասին հենց մեր կուսակցական բան-
վորներն են գանգատվում, վոր ծուլ ու անու-
շաղիբ ես:

— Հալբաթ կը գանգատվեն, բա նրանք սկի
կուզեն, վոր մի հասարակ գյուղացին արհեստ
սովորի, մարդ դառնա: Ուղարկեք, ախպեր ու-

րիշին ուղարկեք կարպիղի զավոգը, մենք ել ան-
գործ կը թափառենք, յա կզնանք ավաղակու թշուռ
կանենք... Ըտենց եք սովորացնում մեզ...:

*
*

Յերկուշաբթի առավոտներն յեթե անցնելու
լինեք քաղաքային այգու ալեյով, նստարանների
վրա դուք կը հանդիպեք մարդկանց: Վոմանք ա-
ռանձին, վոմանք խմբով, մեկը՝ լրագիր կարգա-
լիս, մյուսները՝ վիճելիս:

Ալամալից պիտի կարծեք, վոր գրանք յե-
րեկվա գրոսնողներն են, վորոնք անքան են տար-
վել իրենց վեճով, կամ խորասուզվել լրագրի տո-
ղերում, վոր չեն նկատել, թե ինչպես կիրակին
արդեն մթնել ե, գիշերը նրան մահվան անկո-
ղին իջեցրել ու յերկուշաբթի առավոտն ե ջեր-
մացնում բնությունն իր վերածնված արեգակովը:

Բայց վոչ, այդպես չե, նրանք բոլորն ել այս
առավոտ յեկան ու շարվեցին նստարանների վրա:
Նրանց ճամբ ան վոչ գործարան ե տանում և վոչ
ել մի վորևե գրասենյակ կամ պաշտոնատեղի:
Տնից քաղաքային այգի և ապա այգուց՝ տուն—
ահա նրանց ամենօրյա ճանապարհը:

Քաղաքային այգու այդ մասան այլատարր
ե և այլազանակարգ.—

Ահա, կոտոր ընկած վաճառականը, չհաջողված ազգային հերոսը, անգործ քահանան, անուսադիր գնդապետը, ազգայնացրած տան տերը, անպաշտոն սպան, գործի սպասող գլուղացին, կրճատված պաշտոնյան, և ի լրումն այս բոլորի, ծառերի տակ պըպզած վանեցիների «պարլամենտը»:

Արտոն ել որվա մեծ մասն այստեղ եր անց կացնում, պրոֆմիությունից դուրս գալուց հետո, ուղիղ քաղաքային աչքի չեր գալիս, նստում հաստաբուն մի ծառի տակ ու խորասուզվում մըտքերի մեջ:

Յերկար մտածեց Արտոն, ու այդ մտածմունքների մեջ որեւ անցան:

Այլևս հնար չկար: Վերջին դուռը վոր պիտի բաղխեր, դա Կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն եր:

*
* *

Նորից ծուռ դրած սեղանի մոտ նստած մի այլ չերիտասարդ, բայց արտաքինից ավելի համակրելի:

Յերկար վերարկուն մինչև վոտներն եր փաթաթվել և գլխարկի արանքից մագերի մի փունջ անխնամ կերպով թափվել ճակատի վրա:

Այնքան նիհար եր նա, վոր կարծեք, թե նոր ես հիվանդանոցի խայտիթ հանել և հագցրել իր

վերարկուն: Ակամա ներս մտնողը պիտի մտածեր ու խղճահարվեր, թե ինչո՞ւ այս փոսկրացած չերիտասարդին աշխատեցնում են, միթե՞ բժիշկները չգիտեն այդ մասին:

Բայց նա հակառակ այդ կարծիքի յեռանդուն աշխատող եր ու դեկավար:

— Ընկեր Տապարյան—դիմեց նրան Արտոն—անգործությունից մեռանք, վոչ Յերեանի Կոմիտեն ա ուշք դարձնում վոչ ել պրոֆմիությունը, հույսս ձեզ վրա չա, մի ճար անեք:

— Ի հարկե, ընկեր, մենք անգործների բորան չենք դեկավարում, բայց կարող ենք միջնորդել, վոր քեզ ընդունեն տրակտորների կուրսերը. ցանկանում ես գնալ:

Արտոն մի քիչ մտածեց. ապա—

— Յանկանում եմ, վոնց չե՛:

Կենտրոնական Կոմիտեյի բլանկի վրա նա համապատասխան գրությունը գրելուց հետո, հանձնեց ըստ պատկանելվուն և ապա շարունակեց ծուռ տողերով իր շրջաբերականը:

Տապարյանը սիրելի դեկավար եր, չնայած վոր նա մեկն եր, վոր անխնա խարազանում եր տմեն մի թերությունն ու ամեն մի սխալը, բայց և այնպես հարգվում ու մեծարվում եր կոմյերիտական լայն մասսայի կողմից:

— Տապարջանը հոգի չե, հոգի...

— Իսկական դեկավար ե Տապարջանը...

— Ափսոս չի...:

*
*
*

Հաջորդ որն Արտոն Նորից կենտրոնական կոմիտե մտավ:

— Հրնկեր Տապարջան, չնդունեցին:

— Ինչո՞ւ...

— Յեսիմ, չնդունեցին ելի...:

— Վհնց թե չընդունեցին, ի՞նչ պատճառով...

— Յեսիմ, ասում են թվաբանութուն պաթիմանաս...

— Իսկ դու չգիտե՞ս:

— Ծ'ցծ...

— Ի հարկե պետք ե թվաբանութուն իմանալ, բա ի՞նչ ելիր կարծում:

— Վհր դիան իմանամ, հերս ա սվորացրե՞լ, թե՞ մերս:

— Բոլորովին չգիտե՞ս...

— Հե՛չ:

— Բա մինչև հիմա ի՞նչ ելիր մտածում, ինչո՞ւ չելիր սովորում:

— Իմ սովորացնողն ո՞վ եր:

— Գյուղերիտղալոցը, բանֆակը, քաղլուսվաբը, լիկկայանը...:

— Ե՛հ, քաղցած փորին լիկկայանն ե պաշտա, մի գործ ավեր ապրենք հետո սովորին իրան իրան կլինի:

— Բա աշխատած ժամանակն ինչո՞ւ չսովորեցիր:

— Ութ ժամ չարաչար աշխատելուց հետո ել սովորելու խելք ա մնում:

— Ե՛հ, բարեկամ, ինչպես չերևում ե դու վերին աստիճանի ծուլ ես, գործի ժամանակ չարաչարվում ես, սովորել չես կարող, իսկ անգործության ժամանակ՝ փորդ ե քաղցած լինում, դու ավելի շուտ աշխատունակութունից ես քաղցած բարեկամս, մի բան վոր բոլորովին վաչել չի կոմյերիտականին:

— Թե կոմյերիտականն ես հարցնում, չես շատ լավ կոմյերիտական եմ, դու չիլ վոր իմ գրությանը լինելիր ետենց կը խոսալիր...:

— Լավ, բարեկամս, յես վիճելու ժամանակ չունեմ... թվաբանութուն սովորի, արի քեզ արբակ սորիստների կուրսերն ուղարկենք:

*
*
*

Քաղաքային ալդու մի հաստաբուն ծառի տակ նստած, միտք ե անում Արտոն:

Ծառը գորովոտ մոր նման կռացած, ասես զուրգուրում ե նրան:

Նրա հաստ բռնին հենված Արտոն յերկա՛ր, յերկա՛ր մտածում եր:

— «Յանի ինչ հասկացա ես քաղաք գալուց՝ Գեղումն ելի լավ եր, կուշտ փորով հլա հաց ուտում եյի: Տարի ու կես ա վոչ մի փեշակ չը սվորեցի, վոչ ել գրի սկն ու սիպտակը ջոկեցի, համա գեղի շկոլում սովորող Գերաւիմն ու Սեդրակն ով ա իմանում հմի «Մաճկալ» ու «Ավանդարդ» են կարդում: Յես իմ ձեռով իմ տունս քանդեցի... ընչի՛ս եր պետք քաղաքը...»

Նրա մտքում ելի իրենց գյուղն եր կենդանացել:

Ելի իրենց սարերն են կարմիր կակաչներով ու վալրի շուշաններով զարդարված:

Գյուղի տներն են՝ խուժանի պես խառն ու խռիվ:

Ահա նրանց ծուռ փողոցը և սև պատերով խրճիթն այդ խուժանի մեջ:

Նորից նավթի ճրագը կծկված ճրակագլի վրա, լուռ հեկեկում ե ու նրա նվաղուն լույսի տակ, թոնիրի շուրթին նստած, Արո ապին խրատներ ե կարդում վորդու գլխին: Խոսում ոջախի, ապրուստի և «հորվորդի աղջկա» մասին:

— «Գնամ գյուղ, ենդի մի կերպ յուա կը գնամ, համա եստեղ ել ապրել չի լինի...»:

Իսկ ապրիլն, Չե վոր նա կարող եր չընդունել, ներս չթողնել իր ոջախի գլխին քար քցող «բեգովլաթ» վորդուն:

— «Վոչինչ ապու ձեռը կը պաչեմ, գլխիս կը գնեմ, կասեմ ապի մի դալաթ եր արի, հալալ արա...»

Վճոված եր:

Գլուղում ինչքան բաներ են փոխվել...

Չարչի Չալոյի դուքանի տեղ կոտպերատիվի խանութ ե բացվել կապույտ դռներով: Դարակները՝ լիք ապրանք: Հաճախորդները՝ շատ:

Հին ու խարխլած գպրոցն ել՝ ճանաչել չի լինում: Կոկիկ, սպիտակ ներկած պատերով և շուշա պատուհաններով:

Գլուղի յեկեղեցին ել ասես փոխվել ե Արտոյի աչքին, խաչն ավելի յե ծովել մի կողմի վրա ու մամուռը թանձրացել նրա թեք կողերին: Դռան առջև ել՝ փողի, խոտի ու հարդի շյուղեր են կուտակվել ու ասես ամիսներ շարունակ, մարդկային վոտքը չի խանգարել նրանց անդորրությունը:

— «Յարաբ հմի ժամ եթացող կա՞» - մտածեց Արտոն, յերբ անցնում եր նրա մամուռած ու գորշ պատերի տակով:

Գլուղում ելի նոր բաներ կան: —

Կարմիր փողկապավոր ու մերկասրունք պիտաները:

Ասես Արտոյին հանդիմանելու համար, նրանք փոքրիկ թմբկահարն առաջներն արած, ամբողջ շարքով դուրս յեկան Աղբրի քուչից ու ձգվեցին դեպի քաղաք տանող ճանապարհը:

— Մեկ, յերկու, մեկ, յերկու, ձախ, աջ, ձախ, աջ. .:

Արտոն տխուր ու մտազբաղ, յերկար նայեց ուրախ շարքերի յետից:

Մենակ սրանք չեն:

Ելի նոր բաներ կան...

Կոմսոմոլիստ Հարոն գյուղխորհրդի նախագահ ե դարձել, իսկ Ալեքն ել՝ բատրակկոմի նախագահ:

— «Լավ են առաջ գնացել հանձն...» — մտածեց Արտոն:

Նեղլիկ դռան, արտասովախառն աչքերով և դողդոջ քայլերով վորդուն դիմալորեց ծեր մայրը:

Դեմքն ավելի յեր գունատվել ու հողի գույն դարձել: Մի աներևութ չութ, ասես, ակոս առ ակոս հերկել եր նրա այտերն ու ճակատը: — Այդ կնճիռներն ու խորշոմներն ելին:

Նա ամուր գրկեց և համբուրեց կորած վորդուն ու նվազ ձայնով հեկեկաց.—

— «Վախ, բալա... հերդ մեռավ, կովը ծախեցինք... արտն ել Գարսևան սողեն եր ուղում գավթել...: Համա ձեր պճիճն երը լավ քոմագ արին հա...: Հերդ նրանց որհնելով մեռավ... վախ, բալա, վախ...:

Վողջ տունը շուռ յեկավ Արտոյի գլխին, ոչա աչքերը մթնեցին, նա յերերվեց մոր գրկում... կինո-լենտի արագությամբ մտքովն անց կացավ ամբողջ պատմությունը: Նա զգաց իր սխալը, ծուլության հետևանքները... մտքում հանդիմանեց իրեն... բայց ոգուան ինչ...:

Մայր ու վորդի իրար գրկած դեռ յերկար հեկեկում էին...:

*
* *

Արդեն դարունը վել ջանալու վրա յեր, չերբ Արտոն գլուզ յեկավ:

Կոմիտերիտիության բջիջն այդ տարի չել շաբաթորյակների միջոցով վարել ու ցանել եր նըրանց արտը:

— Ելի լավ ա, արտը վարած, ցանած ա— մտածում եր Արտոն— ես տարի յել չղա կեթանք, ընչանք եկող տարի, տենանք ինչ կլինի:

Ու բոլորովին հանգիստ, ձեռներն չետե դարսած, նա շրջում եր գլուղի փողոցներով:

*
* *

Հուլիսը մոտենում եր:

Հասուն հասկերը մեղմ սվվոցով որորվում էին: Խըշխշում: Քամին կոհակներ եր փռում նրանց ամբողջ տարածության մեջ ու գլուղում, մեծ լեռանդով սրվում էին մանգաղները:

Նորից մտքերի մեջ ընկավ Արտոն:

— Ես շոգ կրակին արտ քաղել կլնի: Ինչ դալաթ արի վոր հմի եկա: Մնայի աշնանը դալի, բջիջը կը բաղեր ու չարչարանքիցը կազատվեյի: Չե, ախպեր, ես շոգ-կրակին յես արտ բաղողը չեմ: Բա վոնց անեմ: Ամոթ ա բջիջին աւեմ, թե արտս քաղեք: Ըսենց ել կրակ կլնի վոր...— մոմտում եր ինքն իրար Արտոն:

Ինչ անել: Ինչպես աղատվել այդ տանջանքից: Յերկար մտածեց Արտոն: Նորից քաղաք փախչել: Ենտեղ ել գործ չկա, սովից կը մեռնի: Բըջիջին դիմի, ամոթ ե... «պետք ա ուրիշ իլաջ գտնել»...: Յերկար մտածեց ու գտավ այդ «իլաջը»:

Բջիջից ու մորից գաղտնի նա Գարսևան աղի մոտ գնաց: Պայմանը կապեցին: Գարսևան աղեն պայմանը գրեց և Արտոն քաղաքում սովորած

տառերով «ձեռք քաշեց» — Արտո Մինասյան:

Պալման արին, վոր Գարսեան աղեն արար քաղի, կալսի և բերքը կիսեն:

— «Ըսենց ա կը գաք, ճանկս կընկնեք, չես գիտամ դուք ինչ լակոսներ եք... վոնց պտի բամբակ...» մտածում եր Գարսեան աղեն պայման գրելիս:

Ուրիշ բան գրեց նա պայմանում, ուրիշ բան կարդաց ու անգրագետ Արտոն ստորագրեց:

Խոսեցին բերքը կիսել, բայց Գարսեան աղեն պայմանում գրեց — «Իբրև փայն ինձ, մեկը Արտոյին», ու ա՛նգրագետ Արտոն ստորագրեց:

Բերքը բաժանելու ժամանակ նոր կռիվն ընկավ, բայց Արտոն իր ձեռքով պայմանն ստորագրել եր, ել ինչ կարող եր տնել:

Վկաներ ել չկային:

Վողջ բջիջը ջղայնացած եր:

— Ախարի մեկը, դրան պետք է դուս անել Միությունից:

— Չարչարվեցինք, վարեցինք, ցանեցինք, վոր կուլանկը քաղեր ու վայելեր, թո՛ւն դրա բեաբուռ յերեսին:

— Ախմախ անդյալին ել խի՞ յենք պահում

միության միջին, ռադ արեք շան վորդուն:

Վողջ բջիջն ատամ եր կրճատացնում:

Հարցը քննեցին բջիջի նիստում, շրջովի քարտուղարի ներկայությամբ:

Բոլորն ել հանդիմանեցին ու խարաղանեցին նրա ծուլությունը և անկայունությունը, բայց վերջում վորոշեցին. —

«Համողել ու հասկացնել, հալա դուս չանել»:

Առջևին յերկու ուռիներ, գլուղի ծերերին նը-
ման մոթալ փափախներն իրար մոտ բերած ա-
սես գաղտնի դրուցում են:

Հետո առավակ աղբախառն ու կեղտոտ ջրով:
Գլուղի յերկրորդ քարաշեն տունն ե այդ:

Առաջներում նա «կանցիլար» եր: Ապա
գլուղի «գալավի» տունը:

Այժմ գլուղի յերկրորդ տեղավորված այդ
քարաշեն տան մեջ:

Քարե մաշված սանդուխներ:

Բարձրանում ես:

Փոքրիկ միջանցք:

Ապա միանման դասարաններ: Սպիտակ պա-
տերով:

Յերկու տարվա կյանք ունի այդ դպրոցը:
Սիրված գլուղի յերկտասարդության կողմից:

Ազատ ժամերին ել նրանք դպրոցի շրջապա-
տից չեն հեռանում:

Հավաքվում են ծեր ուռիների շուրջը, նըս-
տում դպրոցի առջևի քարերի վրա և վիճում:

Կամ խաղում նույն տեղում:

Յեվ դրա համար ել գյուղում ծնողները վոր-
դիններին փնտռելիս—«շկուլի կողմերում թամաշ
արա»—ասում են իրար:

Դպրոցն յերկու տարվա կյանք ունի, բայց
Արտոն առաջին տարին ե ինչ տեղ ե գտել նրա
նստարանների վրա:

— «Գլուղից խեր չի գա, եղ զահրումսը թվա-
բանությունն ելա սվորելինք, բոլ եր, քաղա-
քում, ամեն բանում պետք ա գալու»—մտածում
եր նա:

Յեվ արդեն չորրորդ ամիսն եր ինչ նա այդ
հույսով նստել եր դաստարանում:

* *
*

Ամենից շատ սիրում եյին հայոց լեզվի և
թվաբանության ուսուցիչ Ստնավյանին:

Հայաստանի համալսարանը նոր ավարտած,
բարձրահասակ, ժպտադեմ մի յերկտասարդ եր նա:

Նրան սիրում եյին իր վերին աստիճանի բա-
րեխղճության և ընկերականության համար:

Թեկուզ և տասերորդ անգամ, նա պատրաստ
եր բացատրել միևնույն դասը, յեթե իմանար

վոր վողջ դասարանում մի կամ յերկու հոգի չեն հասկացել:

Բայց Արտոննրան ել չեր սիրում, վորովհետև ամեն մի բան բացատրելուց հետո դեպի Աշտոն եր դառնում ու հարցնում—

— Արտո հասկացա՞ր...

Իսկ դասարանը քմծիծաղ եր տալիս:

Ահա նա բացատրում ե—

— Կան հատուկ և հասարակ անուններ: Այն անունը վոր յեզակի յե, մի հատ ե, իր տեսակից չունի, կոչվում ե հատուկ անուն, որինակ Ստալին, Լուկաշին, Շահումյան, սրանք հատուկ անուններ են, վորովհետև յեզակի չեն, միակ: Ուրիշ Ստալին կամ Լուկաշին չկա: Իսկ այն անունները, վորոնք հոգնակի չեն, շատ են, իրենց տեսակից բազմաթիվ, մեկից ավել, կոչվում են հասարակ անուններ, որինակ վառարան, դպրոց, գիրք, դասարան: Ամբողջ աշխարհում մի վառարան կամ մի դպրոց, կամ մի գիրք հո չկա, հազարավորներ կան, այնպես չի՞, դրա համար ել այդ անունները կոչվում են հասարակ անուններ: Ուրեմն հատուկ են կոչվում այն անունները, վորոնք յեզակի յեն, մի հատ են, իսկ հասարակ՝ այն անունները, վորոնք հոգնակի չեն, շատ, իրենց տեսակից ելի ունեն: Հասկացա՞ր:

— Այո (վողջ դասարանը):

— Արտո հասկացա՞ր:

— Այո...

— Դեհ կր՛նիր:

— Հատուկ են ընդրա համար, վորովհետև ընդոնք յեղափոխական, ազնիվ հրնկերներ են, որինակ հրնկեր Ստալինը, Լուկաշինը, Շահումյանը: Հասարակն ել ընդրա համար ա, վոր անշունչ հաջաթներ են, առանց ընդրանց ել յեղափոխությունը յուր կը գնա, ըզրա համար ել հասարակ են ընդոնք:

Դասարանն ուսուցչի հետ ծիծաղում եր:

*
*

Սանավյանը բավական յերկար և բազմակողմանի բացատրեց գումարման գործողությունը և ապա մի քանիսից հետո գրատախտակի մոտ հանեց Արտոյին:

— Գրիր տասնհինգ:

— . . .

— Հետո քսան հինգ:

— . . .

— Հետո տասնըութ:

— . . .

— Գումարման նշան դիր:

— . . .

— Դե գումարիր:

15

+ 25

18

— Գուժարումս սկսում են վճիռ թվանշան-
ներից:

— Տակի:

— Տակի չեն ասում, նա ունի իր անունը:

— Ութը:

— Ութը չե: Նա ուրիշ անուն ունի:

— Ութ ա ելի, ուրիշ անունը վորն ա:

— Յերբ վոր ութը մենակ ա գրվում, նա ինչ
ա կոչվում:

— Ութը:

— Չեղա՛վ: Յերբ ութից առաջ մեկ ենք գր-
ում, են վախա մեկն ինչպես ե կոչվում, ութն
ինչպես:

— Մեկը՝ մեկը, ութն ել՝ ութ, երկսով մեկ-
տեղ տըսնում:

— Տաս անգամ եմ բացատրել, վոր աչս դեպ-
քում ութը կոչվում ե միավոր, իսկ մեկը՝ տաս-
նավոր:

— Եգ իր ասում...

— Բա ինչ...

— Դե ըդենց ասա, շշկլացնում ես:

— Ուրեմն գուժարումս սկսում ենք վճի

թվից:

— Ութից:

— Ելի ութից:

— Բա խո մեկից չենք սկսելու:

— Վերջի վերջո ութն ինչ ա կոչվում, նոր
եք ասինք ե...:

— Միավորն իր ասում...

15

— Ի հարկե:

+25

— Հա, ելի, միավոր:

18

— Ուրեմն գուժարն սկսում ենք...

47

— Միավորից:

— Դե սկսիր:

— Ութը... ութը... ութը...

Ութ, ութ... ութը... ութը, հինգը, ութը,
հինգը... տասնը... տասնը երկու, տասնը եր-
կու, տասնը երկու... հինգը... հինգը՝ ը՛ր՛...
տասնը յոթը... տասն յոթը. յոթը. յոթը գը-
րենք մեկը պահեք: Մեկը... երկուս ել, երկուս
ել, հա՛, իրեք, մեկ ել... չորս, չորսը գրենք,
բան չը պահենք:

— Վերջացրիր:

— Այո՛.

— Մի անգամ ստուգիր տեսնենք ճիշտ ե:

— Ճիշտ ա...

— Վոչ մի սխալ չկա:

— Հե՛չ...

— Նստիր...

— Ո՞վ կարծում ե, վոր խնդիրը սխալ ե
լուծվել:

Բազմաթիվ մասներ:

— Յուրյ տուր թե, ինչու համար ե սխալ,
Ալեք:

— Ութ հինգ ել տասն իրեր, հինգ ել տաս-
նը ութ, ութը գրենք, մեկը՝ ձեռք. մեկ, մեկ ել՝
երկու, երկու յեկ՝ չորս, մեկ ել՝ հինգ: Ուրեմն
պատասխանը պետք ե լինի 58.

— Ճիշտ ե:

* *
*

Դպրոցից դուրս, Արտոն բոլորովին սովո-
րություն չունեի դաս սովորելու:

Դպրոցում ել չեի խորասուզվում ու մտա-
ծում սովորելու մասին:

Դիրքը փակում եր դպրոցում ու մեկ ել բա-
ցում ելի դպրոցում:

Ինչքան ելին հանդիմանել նրան թե ուսու-
ցիչը և թե դասընկերները: Սակայն վոչ մի ար-
դյունք:

Դասերից հետո նա կամ վեգ եր խաղում,
կամ նաղլերի ականջ գնում, կամ թե քաշ գա-
լիս գյուղի փողոցներով:

— «Աչի՛, բռնեց դատարկ բաներով բեչինս
ինչ ցավացնեմ—մտածում եր նա ինքն իրան, յերմ

միտն եր գալիս սովորելիք դասը—մաշդուն պաի
իրանիցն ըլի, թե չե ինչքան կուզես սովորի,
բան չի դառնա: Յես ել չունեմ ելի, գոռով ա...»:

* *
*

Ձմրան վերջերին շրջկոմը հրավիրեց տըն-
տեսատեր կոմյերիտականների խորհրդակցու-
թյուն:

Բոլոր կոմյերիտականները գեկուցեցին ի-
րենց տնտեսությունների և այդ տնտեսություն-
ներում կատարած նվաճումների մասին:

Խորհրդակցության ուշադրությունը դրավե-
ցին կոմյերիտական Հանեսն ու Հարութը:

Նրանք իրանց արաի հողը նախ լավ պարար-
տացրել ելին և ամբողջ սերմացուն մաքրել, ջո-
կել ու ապա ցանել: Դրանով նրանց բերքը 80
տոկոսով ավելացել եր:

Խորհրդակցությունը քաջալերեց Հանեսին ու
Հարութին նրանց տնտեսություններն օրինակե-
լի հայտարարելով, իսկ շրջկոմը մրցանակ տվեց
նրանց:

Խորհրդակցությունը չմոռացավ նաև զբաղ-
վել Արաուի խնդրով:

Ա. Բեն կողմից սկսեցին պախարակել նրա ծու-

լուծյունն ու կուլակի ազդեցութեան տակ ընկ-
նելը:

Նա ծպտուն չհանեց: Գլուխը կախ նստել եր
մի անկյունում ու կեղտոտ յեղունկներն եր
կրծում:

Խորհրդակցութիւնը վորոշեց միացյալ ուժե-
րով նորից մի տրակտոր և մի շարքացան մեքե-
նա բերել գյուղ:

Բոլորն ուրախութեամբ քվեյարկեցին վորո-
շումը:

Արտոն լուռ ու գլխիկոր կրծում եր յեղունկ-
ները:

* *

Կրկին գարուն եր բացվում:

Զյունը կամաց-կամաց հաւաքում եր սպի-
տակ փեշերը սարն ի վեր և ամեն կողմերից
ձնծաղիկներն սպիտակ բաժակները բացած ժըպ-
տում ելին արևին:

Գյուղը զարթնել եր ձմեռվա նիրհից:

Մեծ յեռանդով պատրաստութիւններ ելին
տեսնում գարնանային աշխատանքների համար:

Տավարն ելին խամից հանում:

Գութանը կարգի գցում:

Սայլի բանդված տեղերը նորոգում: Ու ա-

մեն վոք պատրաստվում եր աշխատանքին դի-
մավորելու:

Իսկ դու ի՞նչ պիտի անես Արտո: Ի՞նչ ես
մտածում: Յեղունկ կրծելն ոգուտ չի բերում:

Ու յերկար միտք արեց Արտոն.—

— «Յես մենակ արտ բեջարող չեմ: Ամա-
շում եմ թե բշիջից ոգնութիւն ուղեմ: Ասենք
ոգնութիւն ել տվին, ինչիս ա պետք: Յես եմ
ու մի չորացած մեր: Դրա հմար արժի գյուղի
ցավացնել: Նա թող իրա գլխի ճարը տեսնի, ես
եւ իմը»...

Վճռեց:

* *

Զնայած կալի ժամանակը կովել ելին, բայց
նա այդ յերեկոյան ելի Գարսեան աղի մոտը
դնաց:

Միասին կծովի չայի խմեցին: Հետո յել Ար-
տոն 25 մանեթ գրպանը դրեց, պայմանի տա-
կին «ձեռ քաշեց»—Արտո Միհասյն, «բարի
գիշեր», «խեր տեսա» ասավ ու դուրս յեկավ:
Նանին վոչինչ չիմացավ:

Առավոտյան նա ցամաքած աչքերով ու ծնկ-
ները գրկած կծկվել եր խրճիթի պատի տակ,

յերբ Արտոն ալ մտքերով տնից դուրս լեկավ:

Որը կիրակի յեր:

Կոմյերիտմիութիւնի բջիջը ծառատնկման ու առվի մաքրման աշխատանքներն եր կատարում:

Պիտներներն ոգնում էին:

Ծերունիները քարերի վրա կծկված խոսում ու գովում էին շինարար կոմյերիտականներին. —

— Հալալ ա կերած կաթները:

— Մաշալլահ, վոսկի տղերք են:

— Փիսն են ա, վոր Աստոծ չեն հավատում:

— Եդ հե՛չ, հլա ջահել են, չեն փահմում, մեծանան խելքի կգան:

Արտոն կծկված, հանցավորի նման ամաչելով անցավ քրտնած կոմյերիտականների մոտից, կամացուկ ծովեց Աղբրի բուհով դեպի քաղաք տանող ճանապարհը, մաքրում մըտմըտալով —

— «Գնամ քաղաք, բալի մի գործ ճարեմ...»:

Վ Ե Ր Զ





10